ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ —ԹԻՒ 3745 1884 ՆՈՅԵՄԲԵՐ 24

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ· Տեսութիւն մը մեծ տէրութեանց գաղտնիներուն վրայ ..... Բ· Ք·
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ· Պ· Կլատսթոն — Հարթինկթոնի Մարգիզն — Լորտ Կրանվիլ
ԱԶԳԱՅԻՆ· «Արձագանք» ի գաղարուամբ ..... ՄԱՐԶՊԱՆ
ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ· Լուբիայի տարիքը ..... Յ· ԵՈՒՍՈՒՓԵԱՆ
ՏԵՂԱԳՐԱԿԱՆ· Եկեղեցւոյ տեղւոյն ..... ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ
ՆՈՐԱՎԷՊ· Սիւզան (Լօժէնն Պլէրիա) Թարգմ. ..... Լ· Բ·
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ· Փշուր գաւառական երգոց ..... Յ· ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ՋԱՆԱՋԱՆՔ· Տաներեքամեայ մարդասպան մը . — Փլորոֆորմեալ հիւսիսային արջ մը .....
ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ· Արտաքին, Ներքին, Ազգային .....
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ· (ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՕՆԹԷՐԼԷՆ) Թարգմ. ..... Մ· ՉՕՊԱՆԵԱՆ

ՊԱՏՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ· Պոլիս եւ գաւառներու —տարեկան.....կէս ոսկի Օսման·
» » վեցամսեայ.....Քառ. » »
Մէկ Թերթին գինն է .....60 փարայ
Օտար քաղաքաց համար տարեկան.....12 Ֆրանք
» » վեցամսեայ..... 6 »
Թղթատարութեան ծախք տարեկան.....Դահ· արծ· 15
վեցամսեայ ..... » » 7½

Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Աւետեաց և Մասիս Լրագրաց
Գալաթիա, Տէրտաուշկեան խան

Կ· ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ

1884

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 23 Նոյեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքային)	.....	110
3 » » » (վճռևկնկ)	.....	109 5/8
3 » Բարիզ » (պանքային)	.....	22 97 1/2
» » » (վճռևկնկ)	.....	23 02 1/2

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՑ

Օսմանեան Քօնսօլիտէ

Երէկ երեկոյ գոցուեցաւ	դհկ....	9 10 1/2
Պօրսային գոցուելէն վերջը	» ...	9 10
Բերայի մէջ	» ...	9 7
Առաւօտուն բացուեցաւ	» ...	9 8 1/2
Բարձրագոյն գին	» ...	9 9 1/2
Նուազագոյն	» ...	9 8 1/2
Կէս օրին	» ...	9 9 1/2
Իւնիֆիկ եգիպտական (գ. կ.)	.....	69 35
Երէկ իրիկուն գոցուեցաւ	.....	70
Բերայի մէջ	.....	—
Այս առտու բացուեցաւ գ. կ.	.....	7
Կէս օրին	.....	70
Հէվալէսիդ	.....	20
Բէքօր քօնսօլիտէի	.....	—
» իւնիֆիկէի	.....	—
Փոխառութիւն 1863	.....ֆր. ...	77
» 1865	..... » ...	59
» 1869	..... » ...	52 50
» 1873	..... » ...	45 50
Պօն տիւ Թրեզօր	.....Անգլ. լ. ...	22 25
Բուլկարիի երկաթուղի	..... ֆր. ...	45 50
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ	..... »	383
Բաժնեթուղթ Լաբիօմի	..... »	70

ԲԱՅՆԵՏՈՒԹԻՒՆ

Սօսիէթէ ժէնէրալ	..... Անգլ. լ....	3 28
Քրէտի ժէնէրալ (գ. կ.)	... Օսմն. լ....	7 12
Պանք տը Գ.նս	..... » ...	5 25
Սօս. Շանժ է վալէօր	..... Օսմն. լ....	3 26
Թրամուէյ	..... » » ...	285

ԸՆԹՑՔ ԴՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի	..... դրշ. ...	100
20 ֆրանքնոց	..... » ...	87 32
Անգլիական ոսկի	..... » ...	110 20
Հօլ Իմբէրիալ	..... » ...	89 35
Քրիմից	..... » ...	51 25
Ռուպլի թղթադրամ	..... » ...	8 76
» արծաթ	..... » ...	89 30
Ֆիօրին	..... » ...	9 1
Մէճ. արծ. (տարբ.)	..... » ...	108
Վէցնոց	..... » ...	102 35
Հինգնոց	..... » ...	102 35
Մէթալիք	..... » ...	98 20
Պղինձ	..... » ...	780
Թղթադրամ	..... » ...	3000

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 4 Դեկտեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսօլի-ե գոցուեցաւ	.....	99 11/16
Օսմն. բացուեցաւ	.....	8 9/16
» » գոցուեցաւ	.....	8 1/2
Օսմն. փոխառութիւն 1865	.....	11 7/8
» » 1869	.....	10 3/8
» » 1871	.....	69
» » 1872	.....	20 3/4
» » 1873	.....	9 1/8
Փոխառութիւն 1877	.....	82
Պանք Օթօման	.....	14
Ռուսական փոխառ. 73 (գ. կ.)	.....	95 1/8
Եգիպտական միացեալ (իւնիֆիկ)	.....	62 7/8
» ուռանձն. (բրիվիլէժիէ)	.....	88
Տայրա Սանիէ	.....	62 1/2
Տօմանիալ (փոխառ. Րօչիլտ)	.....	88 1/4
Հունգարական պարտաթուղթ 1877	.....	102 3/4
Փոխանակութիւն Բարիզի վրայ	.....	—

Վիէննա, 4 Դեկտեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	.....	123 60
Օսմանեան երկաթուղի	.....	22 30

Բարիզ, 4 Դեկտեմ. ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	.....բաց	108 80
» » 3 0/0	.....բաց	79 32 1/2
Օսմանեան քօնսօլիտէ բացուեցաւ	.....	8 65
» » գոցուե. (գ. կ.)	.....	8 62 1/2
» » 1865	.....	59
» » 1869	.....	52
» » 1873	.....	46
Օսմանեան երկաթուղի	.....	46 37 1/2
» Իւժիի բաժնեթուղթ	.....	523 75
Պանք Օթօման	.....	604 37 1/2
Գրետի Լիոնէ	.....	520
» Ֆոնսիէ	.....1316 25	
Բաժնետոմս Լիոնի (գուբ. կտր.)	1240	
Սուէզի ջրանցք	1890	
Ռուսական 5 0/0 1877ի	.....	100 1/4
Իտալական Ռանթ	9860	
Եգիպտական միացեալ գոց	.....	348 75
Սպանիական (արտաքին)	.....	59 3/8
Բրիօրիթէ Թիւրք	.....	387 50
5 0/0 Հելլենական	.....	362 50
Չէք Լոնտրայի վրայ	.....	25 33

ԲԱՐԻԶ ԹԹԻԹ ՊՈՒՐՍ

Դեկտեմբեր 4 ժ. 10, վ. 45

Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0	.....	108 83 3/4
Օսմանեան »	.....	8 65
Եգիպտական միացեալ	.....	312 37 1/2

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33ՐԴ ՏԱՐԻ | 1884 ՆՈՅԵՄԲԵՐ 24 | ԹԻՒ 3745

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ՄԵԾ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ ՁԳՏՈՒՄՆԵՐՈՒՆ ՎՐԱՑ

Ամեն Տէրութիւն պատերազմի առեն նպատակ մը ունի. — յաղթութիւն տանիլ և ըստ կարի նպաստաւոր դաշնադիր մը կնքել: Իսկ խաղաղութեան առեն ամեն Տէրութիւն կը տածէ իրեն յատուկ նպատակ մը, որ կը տարբերի ազգէ յազգ, ըստ զանազանութեան քաղաքական, աշխարհագրական, ընկերային և այլ պայմաններու: Արդ, հիմա խորին խաղաղութիւն կը տիրէ, և կը տեսնենք թէ տարբեր Տէրութիւններ տարբեր ճգտումներ ի հանդէս կը բերեն: Կարծենք անօգուտ չէ քննել առիւծի կերպիւ այս զանազան ճգտումները:

Եւ նախ ըսենք թէ, ըստ ամենայն եռեւութից, խաղաղութիւնն որ կը տիրէ այժմ՝ վաղանցիկ բան մը չի թուիր, և ընդհակառակն կը խոստանայ երկար տեւել: Աստի պիտի հետեւցնենք թէ, ո՛չ մէկ Տէրութիւն կը զբաղի մօտալուտ պատերազմի մը պատրաստութեամբ, և հետեւապէս իւրաքանչիւր Տէրութեան ցոյց տուած ճգտումները պատերազմական տարբեր տեսութեամբ մը պարտինք նկատել: Պիզմարք իշխանն այսպէս կ՚ուզէ: Նորա աշխարհավարական յատակագիծն հիմնեալ է խաղաղութեան երկարատեւ պահպանման վրայ: Իւր մեծադոյն ձեռակերտին, դերմանական կայսրութեան, ամրապնդումն ու տպահովութիւնը կը պահանջեն խաղաղութեան անվթար շարունակումն: Եւ ցորչափ կենդանի է Երկաթեայ Նախարարապետն, ապահով կրնանք լինել թէ իւր այս հայեցքը պիտի ազդէ նաև ուրիշ Տէրութեանց վրայ, և զանոնք ետ պիտի կեցնէ եւրոպական խաղաղութիւնն ի զուր վտանգելու ամեն փորձութենէ: Ժամանակիս խնամատարական տեսութեանց շատ հանճարոյն չէ քաղաքակիրթ աշխարհի մեծադոյն դէպքերը բացատրել այսպէս միակ մարդու մը, ո՛րչափ ալ հզօր, բացարձակ ազդեցութեամբը: Բայց աշխարհավարներ կան որք մարմնացումն են պատմական ամբողջ շրջանի մը, որք իրենց անձին վրայ ամփոփած են ժամանակի մը քաղաքական և ընկերական պայմանները, որոց պատգրութիւնն ու բացատրութիւնն են իրենք: Այս հազուագիւտ նշանաւոր մարդոցմէ է Պիզմարք իշխան, որուն մեծադոյն ձիրքն է՝ ո՛չ թէ դէպքերն հնազանդեցնել իր կամաց, այլ մեծադոյն օգուտը քաղել դէպքերէն: Այս ճարտարութիւնը Պիզմարք իշխանին չափ ունեցող ուրիշ որ և է աշխարհավար, նոյն դիրց և քաղաքական ու ընկերային նոյն պայմանաց մէջ, անշուշտ պիտի ստանար նոյն դերիշխան ազդեցութիւն:

Արդ, եւրոպական խաղաղութեան պահպանումը նկատելով մեծ Տէրութեանց ընդհանուր նշանաբանն, և ընդունելով թէ ամենքն ալ կը գործեն խաղաղ վիճակի մը մէջ և խաղաղասէր տրամադրութեամբ, պիտի փորձենք քննել իւրաքանչիւրին մասնաւոր ձգտումները:

Ա. Մեր մեծ դրացին, Ռուսիա, պարապ չի կենար անշուշտ: Ռուս Տէրութիւնն, իրրեւ կառավարութիւն, շատ թերութիւններ կրնայ գործած լինել. բայց անգործ կենալու թերութիւնն ատոնց մէկ գործած չէ բնաւ, յորմէ հետէ մանաւանդ. Մեծն Պետրոս նոր ուղղոյ մը մէջ արձակեց զայն: Մեք այժմ երկու տարբեր ուղղութեամբք յայժ

դործօն կը տեսնենք ռուս կառավարութիւնը. —Երկրային ու քաղաքական ծաւալումի արտաքուստ, Կեդրոնական Ասիոյ կողմէ, և քաղաքային ու ընկերային կծկումի, ահա ինչո՞ւ համակուտ՝ ի ներքուստ:

Զարմանալէն սրտի յառաջխաղացութեամբ մը, Ռուսիա, ցեղեր, խանութիւններ, քաղաքներ ու անապատներ հաւասարապէս հպատակեցնելով, հասաւ մինչեւ Ափղանստանայ սահմանները, զորս այժմ պրաղած է որոշել և ճշդել դործակցութեամբ ընդ Անգլիոյ, որ թէեւ լսին տերութեամբ մը կը դիտէ իւր մեծ հակառակորդին այս երկրակալութիւնները, բայց ճարտարապէս կը աջօդէ իւր տհաճութիւն, և՝ դէթ ապագայ վտանգներու առաջքն առնելու համար՝ կ'առաջադրէ ափղանեան սահմանագլխոց վրայ կասեցնել նորա յառաջդէմ ընթացքը:

Կեդրոնական Ասիոյ մէջ ծաւալելով իւր իշխանութիւն, Բեդրսպուրկի կառավարութիւնը քանի մը նպատակներու միանդամայն հետամտիլ կը թուի: Նախ, կ'ուզէ ասիական ժողովրդոց, վրայ զօրեղապէս հաստատել իւր տիրապետութիւն, և դառնալ ասիական մեծ Տէրութիւն մը, Անգլիոյ նման: Երկրորդ, կը փափաքի նոր շուկաներ դըտնել ռուսական բնիկ արուեստի ու ճարտարութեան արտադրութեանց, զորս կը քաջալերէ իւր հսկցած եղանակաւ: Երրորդ, կը բաղձայ վիրաւորելի մի կէտը դտնել Արեւելեան մեծաթագ խնդրոյն մէջ իւր մեծ հակառակորդին, Անգլիոյ. և իրաւամբ ասոր լուսադոյն միջոց կը համարի մեռեցնալ Հընդկաստանի ա՛յնչափ, որ ի հարկին ռուս զօրքերն այն կողմէ զօրեղ յարձակում մը կարենան ընել Մեծին Բրիտանիոյ տիարապոյն կէտին վրայ, որ է միանդամայն նորա կենսական մի կէտն:

Ի ներքուստ, ռուս կառավարութիւնը պահպանողական զօրաւոր յեռաչրջում մը կ'ընէ աղատական դաղափարաց ու ղեկավարանց դէմ, որք վերջին տարիներու մէջ բաւական ծաւալ դտած էին ի Ռուսիա: Կրթական դրութեան սեղմում, Համալսարաններէն սկսեալ մինչեւ նախնական դպրոցները. Մամլոյ սեղմում, մեծ ամսագիրներէն սկսեալ մինչեւ դաւառային օրաթերթերը. Խղճի ազատութեան սեղմում, ոչ-օրթոդոքս ժողովրդոց դէմ բռնուած ընթացքով. Վարչային ազատութեան սեղմում, տեղային ինքնօրինութեանց ջնջմամբ կամ կրճատմամբ. Դատական դրութեան սեղմում, հրապարակային դատաստանները բառնալով ամէն կարեւոր դատերու մէջ. Սեղմում ամենայնի և յամենայնի: Այս դրութիւն պիտի յաջողի՞ մինչեւ վերջն, և մեծ ազգը, Եւրոպիոյ սրտին հետ իւր այնչափ սերտ յարաբերութիւններովը, միշտ ետ պիտի մնա՞յ ժամանակին ընդհանուր յառաջդիմական ընթացքէն. —Այս հարցմանց դժուար է հաստատական պատասխան տալ: Ծայրայեղութիւն մը դիւրաւ յառաջ կը բերէ հակառակ ծայրայեղութիւն մը: Նոյն իսկ Ռուսիոյ փորձառութիւնը բաւական է համոզուելու համար այս ճշմարտութեան: Ազատական տարերք ժամանակ մը կրնան ենթարկուիլ դժուար պայմաններու. բայց չհոտպէս չեն կրնար ջնջուիլ: Որչափ ալ խոր տգիտութիւն տիրէ ռուս ժողովրդեան ռամիկ դասուն մէջ, բաւական զարգացեալ կը թուին միջին և բարձր դասերն, և ասոնք խուռ պատերազմի մը բռնուած կը թուին այսօր կառավարական յեռադէմ ուղղութեան դէմ: Այս ներքին պատերազմի ելքն արժան է դիտել նոյնչափ հետաքրքրութեամբ որչափ Խիվայի կամ Մերվի դրաւումը:

Բ. Ասելի բանաւոր պայմաններու մէջ կը տեսնենք մեր միւս հզօր դրացւոյն աշխարհավարութիւնը խաղաղութեան առեն: Ասորիոյ արտաքին ծաւալման քաղաքականութիւնն այնչափ. բացայայտ չէ որչափ է յայտ մասին Ռուսիոյ քաղաքականութիւնն: Ասորիա ամէն կողմէ սլաշարեալ է կազմակերպեալ և քաղաքակիրթ երկիրներով, յորոց ո՛չ մէկուն բացայայտապէս կրնայ աչք անկել նման Ռուսիոյ, որ՝ Ասիոյ կողմէ՝ չօչափման մէջ է բոլորովին տարբեր տարրերու հետ: Ասորիոյ ճակատամարտէն ի վեր, յորում Բրուսիա Ասորիոյ դիրքը կորզեց Լորենց Տէրութիւն դերմանական դրութեան մէջ, Վիէննայի կառավարութիւնը կեդրոնական Եւրոպիոյ կողմէ ծաւալման ամէն հաւանականութիւն կորուսած է վերջնապէս: Բայց ո՛չ այնպէս՝ Եւրոպիոյ ծայրերուն մէջ: Կը տեսնենք թէ Ասորիա մեծ քանակ կը տանի իւր դիրքը զօրացնելու Պալքանեան երկիրներու մէջ:

Առ այս նշանաւոր պատեհութիւն մ՚եղաւ իրեն համար Պոսնա–Հէրսէքի դրաւումն: Այս իրողութենէ վիէննայի կառավարութիւնը կ՚աշխատի հանել ամեն կարելի հետեւութիւն իւր քաղաքական ու տնտեսական շահուց տեսակէտով: Ռումանիա, Սերպիա և Գարատաղ տակաւ կ՚իյնան Աւստրիոյ ազդեցութեան ներքեւ, և նոյն իսկ ի Պուլկարիա, որ հոգւով ու մարմնով Ռուսիոյ անձնուէր կը կարծուէր, աւստրական ազդեցութիւնն յայդուզակս կը մրցի ընդդէմ ռուսականին: Ո՞վ դիտէ թէ ապագայն ինչպիսի քաղաքական բազդրութիւններ կը պատրաստէ այս վոքրիկ երկիրներուն համար, և նոյն իսկ Աւսթրիոյ համար, որ, ինչպէս յայտնի է, դերմաներէն կը նշանակէ Աբեւելեան Տէր–Ընկեր: Սոֆիա, Զէմլինեք, Պելկրատ, Պոսնա–Սէրայ, Պուքրէշ և Փիւդէնէք Արեւելք են վիէննայի և Բէռլինի նկատմամբ, ինչպէս սոքա երբեմն Արեւելք նկատուեցան Արեւմտեան Եւրոպիոյ համար: Եւ լաւագոյն քաղաքական կարդադրութիւնն է այն յորում տնտեսական շահերը կը միաբանին քաղաքական շահերուն հետ: Վիէննայի և Բէռլինի մէջ կը խորհուի թէ Սալոնիկիոյ և Հունդարիոյ առեւտրական և արուեստական շահերը կը պահանջեն որ յարաբերութիւնք ամէն և քաղմապատկին այս արեւելեան երկիրներուն, ինչպէս նաև Եւրոպական Թուրքիոյ և Յունաստանի հետ: Եւ Փալիչէ կոմսը զայս կը յիշեցնէ մեզ, ամեն անգամ որ իւր սովորական քաղաքավարութեամբ, բայց աննկուն հաստատամտութեամբ մը, կը պնդէ օսմանեան երկաթուղիները Պուլկարիոյ, Սերպիոյ և հետեւապէս Աւստրօ–Հունդարիոյ երկաթուղեաց հետ միացնելու աննահանջելի հարկին վրայ: Ֆրանճ Եոզէֆ Կայսեր Նախարարք կը ժխտեն թէ իրենց դիտումն է Կայսրութեան քաղաքական տիրապետութիւնը տարածել առաւել դէպ յԱրեւելս· բայց կ՚ընդունին թէ Աւստրիոյ ճգտումն է սընտեսապէս տիրել այս արեւելեան հրապարակներուն, ոզոզելով զայնս աւստրական դրամագլխով ու վաճառօք:

Ի ներքուստ, Աւստրիա նախանձելի օրինակ մ՚է անշուշտ Ռուսիոյ, այն ազատութեամբ զոր կուտայ զանազան հպատակ ազգութեանց, և որ, վոխանակ տկարացնելու իւր քաղաքական դրութիւն, առաւել ամուր հիմերու վրայ կը հաստատէ զայն: Աւստրօ–հունդարական դրութեան մէջ, դերման և սլաճառ ազգերը տիրող ազգեր են· այսինքն երկուքն երկու դրեթէ հաւասար մասերու բաժնուած լինելով, մէկ մասին վերին կառավարութիւնը դերման ազգին ձեռքն է, միւս մասին վերին կառավարութիւնը՝ սլաճառ ազգին ձեռքը: Բայց մնացեալ ազգերն, ինչպէս Բոլոնացիք, Խրուաղք, Չեխերն, Սլօվէններն, Իտալացիներն, Լայքն, անպատճառ նուաճեալ ազգի մը հանդամանքը չեն կրեր· զի անոնք ալ, եթէ ուրիշ ազգերու վրայ չեն իշխեր, դէթ իրենց մասնաւոր նահանգներուն ու երկիրներուն չատուկ ինքնօրինութիւն մը կը վայելեն, և կը պահեն իրենց լեզուն ու պատմութիւն, ազգային և տեղային սովորութիւնները և ազանդութիւնները, հանդերձ խօսելու, գրելու, դատարուելու և դատանելու կատարեալ ազատութեամբ: Այս ազատութիւն ծայրայեղութեան իսկ կը տարուի, ինչպէս ժամանակ մը հետէ կը տեսնենք Խրուաղիոյ մէջ, ուր Նահանգային Խորհրդարանը մատր կը հանդիսանայ վայրագ կռիւներու և խայտառակութեան անկուր տեսարաններու: Բայց աւստրացի և հունդարացի նախարարք կը խորհին թէ, ազատութեան ծայրայեղութիւնն եթէ չարիք մ՚է, ժողովրդի մը ազատութեան դէմ ուղղեալ կառավարական ամեն ձեռնարկ մեծագոյն չարիք մ՚է: Անոր արդիւնքը սա է որ, նոյն իսկ Խրուաղ ազգին մէջ, ժողովրդեան սուրբ մեծամասնութիւնն համակիր է Աւստրիոյ Կայսեր և նորա կառավարութեան, մինչ, ծայրայեղ տարրերէ թելադրեալ, դիւրաբ պիտի վոխէր իւր զգացումներ, եթէ իւր ազատութեանց դէմ վորձ մը տեսնէր Կայսեր կամ նորա կառավարութեան կողմէ: Աւստրօ–հունդարական Պետութեան երկու մասերն ևս բաւական տարիներէ հետէ կը կառավարուին ազատական քաղաքագէտներու ձեռամբ, որք, հպատակ ժողովրդոց այս ինքնօրէն և ազատ հաստատութիւնները կանոնաւն պահելով ու զարդացնելով, տուին մեծագոյն ծառայութիւն մը կը մատուցանեն իրենց հայրենեաց և ա՛յնպիսի քաղաքական չէնքի մը, որ՝ հակառակ պայմաններու մէջ՝ դիւրաբ կրնար ինքնին խորտա-

կիլ։ — ինչպէս քիչ էր մնացած հունգարական ազատամարտեան առեն, 1849ին, երբ կը կարծուէր թէ Մէդէրնիխի պահպանողական և յետադէմ քաղաքականութիւնը կազմալուծուած էր այլեսեռ տարրերու այն հետաքրքրաշարժ հաւաքածոյն որ Աւստրական Կայսրութիւն կը կոչուի։

Գ. Գերմանիա չատ որոշ ձգտումի մը կը ցուցնէ այս միջոցիս, ազգային դպրութեան հաստատութիւններ կազմելու։ Ընտանեկան և ամուսնական կեանքը չատ յարգի և սիրելի է Գերմանաց մէջ, որք չուտով կ'ամէին, և այս նկատմամբ յոյժ կը տարբերին Ֆրանսացուցմէ, որք չեն բազմանար։ Բայց եթէ ապրուստի առատ և դիւրին միջոցներ չգըտնուին և անոնք ալ համեմատապէս չբազմապատկին, ժողովրդի մը բազմանալն ազգաց և խեղճ սերունդներու բազմանալը կը դառնայ միայն, և վոխանակ զօրութեան պատճառ մը լինելու, տկարութեան պատճառ մը կը լինի Պետութեան։ Գերմանք կը չատնան, և հայրենի երկիրը նեղ կուգայ իրենց։ Արդ, մինչ իւր հայրենակցաց աւելորդ մասը ցարդ կ'երթար ապրուստ մը վնտռելի Միացեալ Նահանգաց և ուրիշ օտար դպրութեանց մէջ, ուր չուտով կը կորուսանէր իւր ազգութիւն, Պրուսիոք իշխանին քաղաքական մէկ նոր խորհուրդն, որ անգամ մ'եւս ցոյց կուտայ նորա հայրենասիրութեան սահմանն, սա է որ միջոցներ ձեռք առած է այդ դպրող Գերմաններն ամէնուրեք այնպիսի վայրեր, ուր, իրենց Կայսրութեան պաշտպանութեան ներքեւ, կարենան պետական գաղութներ կազմել։ Ասկէ, թէեւ հեռացած հայրենիքէն, չեն կորուսաներ իրենց ազգութիւն և չեն օտարանար ազգային կառավարութենէն։ Ասկա նպատակ է որ վերջերս Գերմանիա ընդարձակ հողեր ձեռք բերաւ հարաւային արեւմտեան Աֆրիկէի մէջ, և յարգց Բոնկոյի երկրին լանդրն, ուր Գերմանք կը յուսան հիմնել արդիւնաւոր դպրութիւններ։

Եւրոպիոյ մեծագոյն և հզօրագոյն մէկ Տէրութեան այս ընթացքը խորհրդածութեան նիւթ կը մատակարարէ։ Երբ գաղթականներ, նոյն իսկ հաղարներով, կը հաստատուին յոյժ քաղաքակրթեալ ազգի մը մէջ, տակաւ կը կորուսանեն իրենց ազգութեան ամեն յատկանիշեր և կը յարին գիրենք հիւրընկալող ազգութեան։ Ասկէ Գերմանք կը կորնչէին Միացեալ Նահանգաց մէջ։ Գերմանաց քաղաքակրթութիւնն ամենեւին վար չէր մնար Ամերիկացւոց քաղաքակրթութենէն. բայց բնական օրէնքով մը, ստուարագոյն թիւը կուլ կուտար նուազագոյն թիւն։ Եթէ այս իրողութիւն մը տածել կուտայ Պիզմարք իշխանի մը, և հոգ կը պատճառէ դերմանականին նման մեծ ազգի մը, որ վերջապէս իւր աւելորդ մասերը դուրս ղրկելով դրապէս ոչինչ կը կորուսանէր, միթէ ազգերն ո՛րչափ աւելի պատճառ մ'ունին մտահոգութեան, երբ դպրութիւնն և պանդխտութիւնը կը կրծեն անոնց կենսական հիւթերն իսկ։ Հայք այս մասին դառն փորձառութիւն մ'ունին ստացած։ Միթրինակ երեւոյթ մ'է որ հայք մտամբ կամ ամբողջովին կորուսած են իրենց ազգութիւն ամեն անգամ որ դպրած են իրենցմէ բարձրագոյն կրթութեանը օժտեալ ազգի մը մէջ։ Թուոյ ստուարութեան առջեւ Հայք միշտ չեն ընկճուած. բայց քաղաքակրթական պայմաններու դերազանցութեան առջեւ տեղի տըւած են։ Բայց ի՞նչ կրնանք ընել։ Կարե՞լի է Հայերն արգիլել դպրելէ Միացեալ Նահանգները, Մեծն Բրիտանիա, Ֆրանսա, և այլուր, երբ յոյս ունին, դժբախտապէս ընդունայն յոյս չատ անգամ, բարեկեցութեան միջոցներն ապահովելու հոն։ Դրական ժամանակի մը մէջ կ'ապրինք, ուր ո՛չ ոք հացը կը զոհէ ազգային զգացման։ Հայք և անոնց վիճակակից ուրիշ փոքր ազգեր կարող չեն պետական քաղաքականութեան վայրեր ձեռք բերել, ուր չխառնուին ուրիշ ազգերու հետ և ինքնօրինաբար տնօրինեն իրենց ճակատագիրը։ Բայց երբ աշխարհի մեծագոյն ազգերն իսկ հոգ կը տանին պահպանելու իրենց դպրական եղերայց ազգութիւնը, տարրական խոհեմութեան դործ մ'է որ փոքրիկ ազգերն ամենեւին անտարբեր չը մնան այն միջոցներու որովք կրնան ազգային մասնիչն անգամ պահել իրենց պանդուխտ և դպրական եղերայրներ (*)։

Բ. Փ.

(*)։ Տեղւոյ անձկութիւնը կը պարտաւորէ զմեզ առանձին յօդուածի մը նիւթ ընել Արեւմտեան երկու մեծ Տէրութեանց, — Անգլիոյ և Ֆրանսայի, — պետական քաղաքական դպրութիւններուն քննութիւնը։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՆԴԼԻՈՑ ԱՐԴԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՈՑ

Պ. ԿԼԱՏՍԹՈՆ–ՀՈՐԹԻՆԿԹՈՆԻ ՄԱՐԳԻԶՆ–ԼՈՐՏ ԿՐԱՆՎԻԼ

«Հարկս հարկեւորաց, պատիւս արժանաւորաց»։ Սկսինք ուրեմն առաջին նախարարէն՝ որոյ տարօրինակ անձնաւորութիւնն հանրածանօթ է համօրէն աշխարհի եւ որոյ քաղաքական դերը դնահատուած է տարբեր տարբեր կերպերով, կուսակցութեանց չահուց եւ կրից համեմատ։

Պ. Կլատսթոն Լիվրբուլի հարուստ վաճառականի մը զաւակն է, հետեւաբար սեռած է Անգլիոյ այն միջոցաւ եւ զօրեղ միջին դասէն՝ որ ո՛չ միայն վաճառականութեան իշխանը կը համարուի, այլ նաեւ պարգեւած է Անգլիոյ այնպիսի պետական անձինք՝ որք կրնան համապատիւ համարուիլ այն մեծ եւ զօրաւոր աղնուապետութեան հետ, որ երեք դարերէ հետէ իւր մենաշնորհն ընորհն ըրած էր դԱնգլիա կառավարել։

Պ. Կլատսթոն երկու անգամ երկրին կառավարութեան ղեկավարն եղաւ։ Առաջին անգամ 1868էն 1874, և երկրորդ անգամ 1880ին և այս պաշտօնավարութիւնը կը տեւէ ցայսօր։

Երբ 1874ին, Պ. Կլատսթոն պարտաւորեցաւ թողուլ կառավարութեան ղեկը, իւր կուսակցութիւնը կազմալուծեալ վիճակի մէջ էր, զայն վերակազմել անհնարին կը թուէր, և ինքն յայտարարեց թէ՝ բոլորովին պիտի մեկուսանար հրապարակային կեանքէ։ Բայց չյարատեւեց իւր այս որոշման մէջ, որովհետեւ Լորտ Պիքոնսֆիլտի աշխարհավարական սխալներն արթնցուցին նորա անհանդարտ վառասիրութիւնն։ Հանրային կարծիքն անակնկալելի կերպով նըպաստաւոր եղաւ աղատականաց, և Պ. Կլատսթոն վերստին անցաւ գործոց գլուխը, չենած այնպիսի մեծամասնութեան մը՝ որոյ նմանը ո՛րեւէ անգլիական կառավարութիւն երբեք չէ ունեցած։

Դուն ուրեք պատահած է որ կառավարութեան մը պետերն լինին այնքան յարգելի, այնքան սիրելի, այնքան համակրելի իրենց կուսակցաց, որքան Պ. Կլատսթոն։ Այսու հանդերձ Պ. Կլատսթոնի բարեկամք լաւ կը ճանչնան նորա թերութիւններն։ Պ. Կլատսթոնի գլխաւոր թերութիւնն է վաթանամիտ լինիլ իւր որոշումները տալու ժամանակ։ Երբ կնճռոտ խնդիր մը կը ներկայանայ, Պ. Կլատսթոն միտքանակ հաստատամիտ կամքով և կորովկ ձեւով այդ խընդիրը լուծելու, կ'սկսի վարանիլ և ժամանակ կորսնցնել։ Բանակցութեան կը մանէ հակառակորդին հետ և պատ ի պատ միջոցներով կուզէ իմեռս բերել բաղձացեալ արդիւնքն։ Իւր այս ընթացքով, առաջին նախարարը թէ՛ ժամանակ կը կորսնցնէ և թէ՛ անօգուտ տեղը իւր ոյժերը կը վատնէ։

Սակայն ո՛չ իւր պաշտօնակիցներէն, ոչ իւր քաղաքական հրապկիցներէն միւն իրեն չափ խորին կերպով հմուտ է երկրին ամէն գործոց։ Ո՛չ միւն ի նոցանէ այնքան հզօրպէս կը միայլեցնէ յանձին պերճախօսական այն բաղնադիմի յատկութիւններն որոցմով միայն կարելի է տիրապետել ժողովի մը, ապդի մը վրայ։ Վերջին անգամ որ Պ. Կլատսթոն պատյտ մ'ըրաւ Սկովլոյ մէջ, նոքա որք այս առթիւ պատեհութիւն ունեցան լսել նորա առենաբանութիւններն, անոնց անջնջելի յիշատակը պահեցին և անուանեցին պերճախօսը «Միստըտհանի Մէհտին» (Պ. Կլատսթոն Միստըտհանի երեսփոխան է)։

Պ. Կլատսթոն օժտուած է հրաշալի սուր յիշողութեամբ և ունի միանգամայն խորհրդարանական մեծ փորձառութիւն։ Այս երկու յատկութիւնք մեծապէս նպաստեցին իւր յաջողութեանց։

Մասնաւոր կենացը մէջ, Պ. Կլատսթոն չատ պարզ է, խստաբարոյ և արժանի յարգանաց։ Իւր մեծ հաճոյքն է կարտել հինաւուրց ծառեր։ Նորա այս անմեղ մոլութիւնը նկատուած է իւր հակառակորդաց կողմէ յայտնի ապացոյց մը նորա քանդիչ ճգտումնց, և յեղափոխական բնաւորութեան որ թշնամի է ամէն նախնի հիմնարկութեանց։

Կիրակի օրերը Պ. Կլատսթոն իւր զինին եկեղեցին կ'երթայ և այնպէս ջերմեռանդութեամբ կը կարդայ ծամաքէթն, իբր թէ յետին ածխադործի մը պէս հաւատացեալ լինէր։ Ոմանք կը կարծեն թէ՝ Պ. Կլա-

տեղն սկեպտիկեան մ'է և կ'ամբաստանեն զնա թէ՝ իբր աղօթասիրութիւնն արտաքին ցոյց մ'է, կեղծաւորութիւն է, բայց այս ամբաստանողք կը սխալին: Պ. Կլատսթոն նեղքին հաւատամբ և անկեղծ կերպով քրիստոնեայ է, մինչեւ իսկ միստիկական մ'է, բառին արդի նշանակութեամբը:

Պ. Կլատսթոն միշտ արտաքոյ կարգի վայելչէ կերպով կը հագուի և ընդհանրապէս իր զգեստներն արտասովոր եղանակաւ կտրուած են: Խորհրդարանական բեմին իշխանը կարծես թէ կ'ուզէ նաև լինիլ նորաձեւութեան թագաւորը:

Ձոխ դիպակներու և նոր ձեւերու համար Պ. Կլատսթոնի այս անմեղ սիրահարութիւնը միակ պէնք կ'ընծայէ իր հակառակորդաց իր վրայ ծիծաղելու:

Երանի՛ այն մեծ մարդկանց որք չունին աւելի մեծ պակասութիւններ:

Այն օրն յորում Կլատսթոն որ և է պատճառաւ հեռանայ ասպարէզէն, իր յաջորդն այժմէն յայտնի է: Այդ յաջորդը Հարթինկթոնի մարքիզն է, պատերազմական դործոց արդի նախարարը:

Պ. Կլատսթոնէ վերջ Հարթինկթոնի մարքիզն է աղատական կուսակցութեան ամենէն զօրաւոր դէմքը: Սքանչելապէս քաղաքական մարդ մ'է, և նմանչ մը աղնուապետական այն մեծ ընտանիքներու,—կատարելագոյն ընտանիքներ «կովընէնթ ֆոթլէ», որք շարունակ երեք դարեր իրենց ձեռաց մէջ ունէին Անգլիոյ ճակատագիրն, և որք մինչեւ ցայսօր կը վայելեն այնպիսի հեղինակութիւն մը, այնպիսի շուք մը որոյ դաղափարն իսկ չունին ուրիշ աշխարհներ: Հարթինկթոնի մարքիզն ունի այն յատկութիւններէն շատեր յորոց գործէ է իր կուսակցութեան պետը: Համբերող է, յարատեւող է, վարանոտ չէ, և իբր անշահախնդիր որոշողութիւններն միայն հանրային օգուտն ի նկատի ունին: Նախ քան Ո-էկ լինիլն, անդլիացի է· բայց յայտնի՝ իր ստացած կրթութիւնն, իր ծնունդը գինքը դրած են այնպիսի բարձր դիրքի մը մէջ որով դժուար չէ եղած իրեն ո՛ր և է անձնական կամ կուսակցական ջնջինչ չհերիք բարձր մնալ: Իբր ճարտասան, չինչ և հակիրճ կը խօսի, բայց կրակոտ չէ: Գլուխը տաք չէ· իր մտային յատակ կարողութիւնք խնդիր մը իր ամբողջութեան մէջ կ'ընդգրկեն և կը թափանցեն նորա բոլոր մանրամասնութեանց: Նորա Հարթինկթոն կատարեալ տիպ մ'է աղնուական պետական մարդու: Յիսուն և մէկ տարեկան է· հետեւաբար ունի այն տարիքն յորում ուրճաւորութիւնը կ'աւելնայ դիտութեան վրայ, բայց զօրաւոր կաճքը ոչինչ կորսընցներ իր այժէն: Ամուրի է և թուի թէ միշտ ամուրի պիտի մնայ: Կնոջ մը համար իր տածած սիրոյն մէջ յաջողութիւն չգըտնելով՝ մեծ վիշտ ղգայ և այնուհետեւ հրաժարեցաւ ամուսնանալէ:

Հարթինկթոնի մարքիզը Տըվոնշըրի դքսին անդրանիկ զաւակն է և նորա ժառանգը, սակայն իր ծովածաւալ ժառանգութենէն կը հրաժարի ի նպաստ իր եղբօր որդւոյն, այսինքն Լորտ Ռալֆնտիլի զաւկին: Տարաբաղդ լորտ Ռալֆնտիլ անցեալ տարի Իրլանտիոյ մէջ զոհ եղաւ Ֆէնիանեբու դաշոյնին:

Լորտ Կրանվիլի անունը քաջ ծանօթ է դիւանագիտաց աշխարհին: Լորտ Կրանվիլ միշտ Արտաքին գործոց նախարար եղաւ այն երկու նախարարութեանց մէջ որոց գլուխն Պ. Կլատսթոն էր: Աղնուական լորդը նշանաւոր է մանաւանդ այն իր յոյժ սիրալիր և բարեկիրթ վարմունքին համար:

1870 նոյեմբեր ամսոյ մէջ Պ. Թիէր առնդուտ տեղը անոր դիմեց և ուղեց յուզել նորա սիրտը ի նպաստ Ֆրանսայի, բայց ի զուր: Ֆրանսայի խրիմու դաշնակիցը անտարբեր էր և լորտ Կրանվիլ այնքան սառն և անզգայ ցոյց տուաւ ինքզինքն որքան Պ. Կլատսթոն: Սակայն շատ չանցած Անգլիա տեսաւ թէ Ֆրանսայի պարտութիւնը ծանրացեց ջնջել տալու Խրիմու պատերազմին արդիւնքը: Անգլիացիք այս պարագային կրնան սա դասն առնուլ թէ՝ «Աչխարհավարութեանց լաւագոյնը եսականութիւնը չէ»:

Անոնց ծանրութիւնը սկսած է զգալի լինիլ լորտ Կրանվիլի համար· իր մտային ոյժը բաւական տկարացած է վերջին տարիներս: Էր յանանակ մը յորում լորտ Կրանվիլի տաղանդաւորութիւնները խորհրդարանին հրճուանք կ'պատճէին: Իրական պերճա-

խօսութեան յաջորդած է այժմ բազմախօս երկարաբանութիւն մը։

Լորա Կրանվիլ լաւ կը ճանչնայ օտար երկիրներու քաղաքական կացութիւնը և ողջմտութեամբ կը դատէ զայնս, սակայն նախարարութեան մէջ չունի այն ազդեցութիւնը որ անհրաժեշտ է իւր քաղաքական հառոտումներն ընդունելի ընել տալու համար։ Օրինակ լմն իբր առտդ կ'ըսուի թէ՝ Լորա Կրանվիլ բնաւ հանգարծիք չէ Պ. Կլատսթոնի Ռուսիոյ կեդրոնական Ասիոյ մէջ այնքան յառաջանալուն. բայց Պ. Կլատսթոն չունի Լորա Կրանվիլի ունեցած երկիւղը և օր մը խորհրդարանին մէջ յայտարարեց թէ՝ «այդ երկիւղները պատաւ կանանց ահ ու դողն են։»

Ըսինք թէ՝ Լորա Կրանվիլ մեծ հանգաւ կը վայելէ իւր քաղաքավար և բարեկիրթ վարմանց համին, սակայն ըստ վաւերական տեղեկութեանց՝ Լորա Կրանվիլ այդ քաղաքավարութիւնը պահ մը մոռցած լինելու է Յունուարի վերջին դեսպանախորհրդին ժամանակ։ Օր մը այնպիսի յարձակում մ'ըրաւ ընդդէմ Գերմանիոյ դեսպան Մխենթէլը կոմսին, որ ինքն ալ դաժան ոչխարիալայի մ'է, որ ամէն ոք զարմացած ձգաց։ Այս դէպքին վրայ դեսպանախորհուրդէն վերջ Անգլիոյ և Գերմանիոյ հանգուլը ծանր վիճաբանութեան բռնուեցաւ։ Հէրսէր Պիզմարքի ուղեւորութիւնը վերջ տուաւ այս պայքարին և խաղաղութիւնը վերահաստատուեցաւ։

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

«ԱՐՁԱԳԱՆՔ»Ի ԴԱԴԱՐՈՒՄԸ

Ս. Պետերբուրգ, 10/22 Նոյ. 1884

«Գրաքննական Օրէնքի 49րդ յօդուածի հիման վերայ, յաւելուած 4րդ յօդուածի, (Ծանօթութիւն), Օրինաց Հաւաքածոյ, հատ ԺԴ. 1876 թուականի չարաչնակութեամբ՝ ներքին գործոց նախարարը որոշեց 8 ամսով դադարեցնել հայերէն լեզուով հրատարակուող «Արձագանք» լրագիրը»։

Ահա պետական նոր կարգադրութիւնը, որ երէկ հրատարակուեցաւ պետութեան պաշտօնական լրագրին մէջ և այսօր արտատպուեցաւ ուրիշ լրագիրներուն։ Կարգադրութիւնը կրնայ է նոյ. 8 թուականը։

Ընթերցողն այս յօդուածներուն, յաւելուածներուն ու ծանօթութեանց կոյտերից մի բան միայն իմացաւ, այն է թէ Տիղլիսի «Արձագանք» լրագիրն 8 ամսով դադարեցրած է, և կը ցաւի անշուշտ, որ չգիտեր մէջ բերուած յօդուածներուն ինչութիւնը, որպէս զի գաղափար կազմէր «Արձագանք»ի անցեալ յանցանքին վերայ, որի հետեւանքն է եղել այս շատ խիստ պատիժը։ Սակայն ես էլ, որ աշխատեցայ վերահաստատ լինել այդ յօդուածներուն ինչութեան և Ռուսաց Օրինագրքի լաբիւրինթոսը քրքրելով՝ ես էլ ոչինչ բացատրութիւն չգտայ «Արձագանք»ի յանցանքին. որովհետեւ վերոյիշեալ յօդուածի յաւելուածը բառ առ բառ թարգմանութեամբ հետեւեալ իմաստն ունի.

«Այն դործերի մասին, որոնք քննվում են խորհուրդի մէջ դռնիակ նիստով՝ պարբերական մամուլին մէջ կարելի է հրատարակել ոչ այն դատարանի վճիռը, բաց ի այն դէպքերից, երբ գործի ուրիշ մասերի ու հանրատանութեանց հրատարակութիւնը թոյլատրվում է ըստ 1147 յօդուածի Քրէական Դատարանի Օրինաց»։

Սրանից այն ենք հասկանում, թէ «Արձագանք»ին վիճակուած ճակատագիրը նախ դռնիակ նիստով վճռել է Տոլստոյ կոմսը և այդ վճիռն հրատարակում է այսօր առանց պատճառաբանելու, ըստ այն իրաւանց՝ որ վերոյիշեալ յաւելուածը տալիս է նրան։

Այս քահանայ օրէնքը, որի ղօրութեամբ «դռնիակ նիստով» կարելի է վճռել և դադարեցնել բոլոր Ռուսաստանի մամուլը, վակել տպարաններն ևս, մեզ աւելի տարօրինակ է թվում, երբ յիշում ենք, թէ «Արձագանք»ն, ինչպէս նաև Ռուսաստանի բոլոր լրագիրները, բաց ի երկու մայրաքաղաքների լրագիրներից՝ ենթարկուած էր նախնական գրաքննութեան, այսինքն նորա իրաքանչիւր համարը, դեռ չտպուած, ենթարկվում էր գրաքննիչի դիտողութեան, որի հաւանութիւնն առնուելուց յետոյ միայն կարող էր հրատարակվել։ Ասում եմ թէ պատահէին նորա մէջ այնպիսի յօդուածներ ու խօսքեր, որոնք պետութեան շահերին

հակառակ կարծուէին՝ դրաքննիչի իրաւունքն և պարտքն էր կրճատել յօդուածի վատնդաւոր տեղերը կամ բոլորովին ջնջել յօդուածը։ Երբ այս պարտաւորիչ օրէնքը կայ, ամենքիս էլ պարզ է, որ «Արձագանք»ը չէր կարող Ռուսաստանի շահերին դէմ դրել, ոչ իսկ դրաքննական օրէնքին դէմ գործել, որի մէջից անցնելով գովւում էր նորա իբրաքանչիւր հասարը։ Ի՞նչ կերպով ուրեմն պէտք է բացատրել նորա դադարումն 8 ամսով, որի ընթացքում մենք երկար ժամանակ զրկուելու ենք Կովկասի ամենախոհեմ և ամենալուրջ հայ լրագրից։

Որովհետեւ, ինչպէս վերը բացատրեցի, «Արձագանքը» չէր կարող դրաքննական օրէնքներին դէմ մեղանչել, և որովհետեւ ներկայ դադարումը պատճառաբանեալ չէ (ինչպէս ընդհանուր սովորութիւն է որ և է լրագրի նախազգուշութիւններ տալու կամ դադարեցնելու առիթներում), ուստի մնում է միայն ենթադրել, թէ Ռուսաց տէրութիւնը Հայերիս նկատմամբ ունի մի ծածուկ քաղաքականութիւն, որի դէմ «Արձագանքը» գրելիս է եղել կամ կը գրէր, երբ առիթը գար։ Որովհետեւ այդ քաղաքականութիւնը ծածուկ պէտք է մնայ՝ ուստի եթէ պետութեան պաշտօնեայն ջնջէր «Արձագանքի» այս և այն յօդուածը, որ (թերեւս անդիտակցաբար) ուղղուած է յիշեալ քաղաքականութեան դէմ՝ պարզ է որ նոյն իսկ սրբանով խափանելին կը մատնէր պետութեան դաղտնիքն։ Ահա այս «անյարմարութեան» առջեւն առնելու համար է որ, իմ կարծիքով, ներքին գործոց նախարարութիւնը վճռեց առ ժամանակ լռեցնել «Արձագանքը», մինչեւ անցնի այն ժամանակն, երբ այս լրագիրն իւր յօդուածներով կարող էր վնասել պետութեան գաղտնի դիտումներին։

Այս տեսակէտով աւելի յառաջ գնալով, կը դանենք նաեւ այն խնդիրը, որի մէջ «Արձագանք» կարեւոր նշանակութիւն պէտք է ունենար, եթէ հրատարակուելիս լինէր։ Խօսքս կաթոլիկոսական խնդրի մասին է։ Գլխաւոր ընտրելոյն և ընտրեալին, երջանկայիշատակ Ներսէս Պատրիարքի ողբալի մահով նոր հանդէս է բացվում ազգային լրագիրներին՝ ընտրելիներ դանելու և ժողովրդի միտքը պատրաստելու։ Հերու երբ ընտրելեաց մասին ջերմ վիճաբանութիւններ էին լինում հայ պարբերական մամուլին մէջ՝ միայն «Արձագանքն» ու «Մշակն» էին, որոնք արտայայտում էին ընդհանուր ժողովրդի ճշմարիտ բաղձանքը և եռանդով պաշտպանում էին Կովկասում հանդուցեալ Պատրիարքի ընտրելիութիւնն, որը տեղի ունեցաւ Ս. Էջմիածնում մայիսի ընտրութեանց ժամանակ։ Այժմ երբ Մշակը դժբաղդաբար դադարեցաւ հրատարակուելուց՝ մնում էր միայն «Արձագանքը» արտայայտող և ղեկավարող Ռուսահայոց ժողովրդի բաղձանքին, և անշուշտ խիստ մեծ ազդեցութիւն պիտի ունենար ներկայ խնդրում ընթերցողներին վերայ, թէ՛ իւր յօդուածների մշակուած և լուրջ լինելովը և թէ՛ իւր խմբագրի, Մեծ. Արդար Յովհաննէսեանի վայելած նշանակութեամբ ու համակրութեամբ Կովկասի հայ շրջաններում։ Ձեր ընթերցողները թերեւս չեն մոռացել, որ նոյն Գ. Յովհաննէսեանցն էր, որ մայիսի ընտրութեանց համար Ս. Էջմիածին ուղեւորեցաւ իբրեւ պատգամաւոր Վրաստանի և Իմերէթի կարեւոր թեմին։ — Ուրեմն պետութիւնը խափանելով «Արձագանքի» հրատարակութիւնը մինչեւ կաթողիկոսական նոր ընտրութեանց վերջանալը վերցնում է մէջ տեղից մի մեծ խոչընդոտն իւր դաղտնի դիտաւորութեանց և աւելի դիւրութիւն կ'ունենայ գլուխ բերել իւր մտադրութիւնը, մանաւանդ որ — ցաւ է խոստովանիլ — կան մեր մէջ լրագիրներ, որոնք իրանց ուղղութեամբ իսկ և իսկ համապատասխանում են այս «դաղտնի» դիտմանց։

Եթէ ճիշդ է մեր այս տեսութիւնը՝ ուրեմն «Արձագանքի» առ ժամանակեայ դադարումը պէտք է համարիլ պետութեան առաջին քայլը՝ կաթողիկոսական ընտրութեանց միջամտելու, և դուցէ չուտով առիթ ունենանք լսելու կամ կարդալու ուրիշ դաղտնի կամ յայտնի տնօրէնութիւններ եւս, որոց նպատակը լինի Հայոց կաթողիկոս տալ այն անձը, որին չեն ուզում Հայերը, այլ ուզում է Ռուսաց տէրութիւնը։

Կարծեմ աւելորդ է մինչեւ անգամ ասելն, թէ ի՛նչ ենք զգում մենք այսպիսի տնօրէնութիւնները հպատակօրէն դործադրելու հարկին մէջ գտնուելով։ Մեր միակ մխիթարութիւնը — եթէ կարելի է այսպէս

կոչել մի աւետաբերական երեւոյթ — այն է որ գրաքննական այս բռնաւոր ճնշումին տակ հեծում է ոչ միայն Կովկասի հայ մամուլը, բայց նորա հետ նաեւ մի տիեզերաձաւալ ընդարձակ երկիր, որ Ռուսաստան է կոչվում։ Այս տեղ այժմ բոլորովին անհետացել է այն, որ երբեմն կրում էր կարծեաց ազատութիւն անունը։ Լռել են ազնուամիտ հրատարակիչները, դադարել են համարձակ եւ ազատամիտ լրագիրները։ Անձամբակ ազատութիւն է վայելում այժմ մի ծայրայեղ — յետադիմական, Կաթկովի «Մոսկովսկիյա Վեդոմոստի» լրագիրը, որ դառնութեամբ լցնում է բոլոր հայրենասէր սրտերը։ — Սակայն աւետ ենք մենք էլ Ռուսաց առածով թէ «ինչքան վատ՝ այնքան լաւ»։

ՄԱՐԶՊԱՆ

ԲՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ԼՈՒԲԻԱՅԻՆ ՏԱՐԻՔԸ

Ո՞վ չէ տեսեր, ո՞վ չէ ճանչեր, ո՞վ չէ կերեր Լուբիան, այն պատուական հատիկները որոնք մեզմէ ու հրապուրիչ համով, թէ պահք թէ ուտիք, ընդհանուր մարդկութեան անգին ծառայութիւն կը մատուցանեն։ Սակայն ո՞վ կը մտածէ համադամ Լուբիան պնակին մէջ առած առեն, թէ ո՛ւստի գայ եթէ ոչ յո՛ երթայ, թէ ի՛նչ է անոր տարիքը, թէ քանի՛ քանի սերունդներ ծընած, սերած, կերած եւ մեռած են լուբիային աշաց առջեւ, թէ ի՛նչ ազգէ է Լուբիան ևայլն։ Մտածելի ուրեմն, այս անգամ Մուխէ ընթերցողաց ներկայացնել Լուբիային կենսագրութիւնը յուսալով որ, եթէ գրածս Լուբիային չափ համով չէ, գէթ անգնահատելի հատիկներն ինձ երախտապարտ պիտի մնան։

Լուբիան, (Լատ. Ֆազէօլը — Վո-Լիւբէօ) թող ներէ ինձ եթէ աստ յայտնեմ թէ հայրըն ու մայրն անծանօթ ծերուկ մ'է։ Վընաս չունի. Էմիլ ալ Ժիրարտէն ալ այսպէս էր, ըսաւ բարեկամիս։ Բուսաբանները երկար առեն կարծեցին թէ սովորական Լուբիան Հնդկաստանէն եկած է։ Ոչ ոք զանի վայրենի վիճակին մէջ տեսած էր և տեսած է ցարդ. և այս կարծիքն կար, թէ Աֆրիկէի և Ամերիկայի ջերմ ու բարեխառն երկիրներու մէջ չհակուած կը գտնուէր։ Պ. ալ Փանտոլ Ճենովայի դիտուն դատած է թէ Սանաքրիտ լեզուի մէջ լուբիային անուն չկայ և թէ տատնեւվեցերորդ դարու մէջ պարտիզպանք պաճկան քակլայ կը կոչէին զայն։ Եւ որովհետեւ բազմաթիւ հեղինակաց հետ նա եւս համաձայնած է թէ Յոյնք կը չհակէին այս տունկը Ֆազէօլը կոչելով, ապա ուրիշն աւելի հաւանական է թէ լուբիան առեւմտեան Ասիոյ մէջ ծնունդ առած ըլլայ ինչպէս Պ. Ժօրժ ալ Մարթէն եւս կը կարծէ։

Արդեօք Թէոփրաստէսի Տօլիչօս կոչածը, Տիոսկորիտէսի Ֆազէօլոս անուանածը, Հռոմայեցւոց Ֆազէօլոս և Ֆազէօլոս կոչածը մեր Ֆազէօլոս վո-լիւբէօն է։ Այս խնդիր քննութեան կը կարօտի։ Անուանց նմանութիւնը զօրաւոր փաստ է և բաւական ապացուցիչ չէ։ Արդի Յոյնք Ֆասոլէա կ'անուանեն, Ալպանեզիք Ֆազէլէ, Իտալացիք Ֆաճիօլը։ Սակայն Պ. ալ Փանտոլ, ուստի կը քաղէ այս տեղեկութիւնները, կը յաւելու թէ բաւական յանդուգն ըլլալ պէտք է հին հեղինակի մը մէկ երկու բառովը վճռելու համար տունկի մը տեսակը՝ մինչդեռ այժմեան բուսաբանք տունկերը քանի քանի դարեր դարձեալ անկարող են շատ անգամ անոնց ցեղն ու ընտանիքը որոշել։

Եթէ ժամանակաւ Լուբիան Ճենովան մտաւ՝ ուրիշ բանջարեղէնք ալ կային անկէ առաջ այցելած, ինչու որ Կատոնի ժամանակ տակաւին Ֆազէօլուսը անծանօթ էր ի Հռոմ և կայսրութեան առաջին տարիները միայն Լատին հեղինակք կ'սկսին խօսիլ անոր վրայ։ Պ. Վիրլօզի դերմանացի երեւելի դիտուն, Տրովադայի քաղաքին տեղը ըրած խուզարկութեան միջոցին գտաւ շատ մը բանջարեղէնք, ինչպէս Բակլայ, Մաշ, Լայն, բայց ոչ Լուբիա։ Նմանապէս Ջուլիոս Սալուսթ, Աւսոնիոս և Խտալիոս առեղնահին բնակութեանց վայրերուն մէջ մինչեւ ցարդ երբէք չգտնուեցաւ մեր սիրելի տունկը։

Հին Եգիպտոսի մէջ եւս աւետաբեր չէ տեսնուած Լուբիան, քանի որ ոչ բուրգերու մէջ և ոչ ալ ուրիշ մումիաներու քով գըտ-

նուած է նա . պատկերն ալ չկայ երբէք : Արդէն այսպիսի համով բանջարեղէն մը ե- դիպտացւոց համար պաշտելի պիտի ըլլար և աստուածոց կարգը պիտի դասուէր եթէ ղանի ճանչնային : Խե՛ղճ փարաւոններ , ինչ մեծ կորուստ են ըրած :

Իսկ ուրիշ անուն մը կայ , կ'ըսէ Պ. տը Քանտոլ , որ այնչափ հին չէ և որ արաբերէն է . այն է ը-պէ՞ անունը որ Եգիպտոսի մէջ կը դործածուի և հնդկերէն Լօպա անունը : Մենք որ լոբիա կամ լովիաս կը կոչենք , հաւանօրէն մի եւ նոյն արմատէն կը հանենք այս բառը : Զին հեղինակները երբէք չեն խօսիր այս բանջարեղէնին վրայ :

Ըսելէ թէ այս ամեն նկատողութիւնք անծանօթ կը թողուն լոբիային հայրենիքը :

Սակայն , երբ ոչ ոք կը մտածէր թէ Ամերիկայի մէջ տնտուկ լոբիային նախահարքը , յանկարծ վերջերս Բերուի մէջ Լիմա քաղաքին մօտ հին դերեզմաններու մէջէն գտան անոր հատիկները : Եւ ահա խնդիրը նորոգուած է :

Ցայտնի չէ թէ այդ դերեզմանք Սպանիացւոց արշաւանքէն առաջ կային թէ ոչ , այսու ամենայնիւ դիտողութեան արժանի է թէ այդ հատիկներուն հետ դտնուած յիսուն տեսակ բանջարեղինաց և ոչ մին Եւրոպայէն գնացած է : Ուրեմն հաւանական է որ այդ տունկերը Ամերիկայի մէջ Սպանիացւոց հաստատուելէն առաջ կային և դերեզմանք վերջէն չմտուած ալ ըլլան դարձեալ հին սովորութեան մը համաձայն մեռելոց հետ տունկեր միասին թաղելու սովորութիւնը ի դործ դրուած է . քանի որ կաթոլիկութեան մէջ այս տեսակ կանոն չկայ , ըսել է թէ տեղականք զգուշացած են օտար բերմունք եղող տունկեր կրօնական նպատակի դործածելու :

Ա,յս ամեն նկատողութիւններէ կը հետեւի թէ լոբիան Քրիստոսէ երկու դար առաջ ծանօթ էր : Գուցէ աւելի առաջ ալ , բայց մեր դիտցածը այսչափ է : Բան դարձ աւելի է որ նա կ'ապրի և ոչքան թագաւորութիւնք եկած են ու վճռացած բայց լոբիան տակաւին դեռ չատ քանի դարեր պիտի ապրի և իր քաղցր լուծին ներքեւ պիտի ապրին ու անուն առնեն աղքատն ու հարուստն անխտիր :

Գիտէ՞ք թէ լոբիա անունը ուստի եկած է : Պ. տը Քանտոլ իւր բուսաբանական աշխատութեանց մէջն մէջ կ'ըսէ թէ

«Արեւելագէտք լաւ կ'ընեն եթէ հետազօտեն թէ լոբիա հին բառ մ'է սեմական լեզուաց մէջ : Եբրայերէն ասոր նման բառ չկայ և մի դուցէ Հայերն ու Արաբները լոբիա բառը Յունաց լեպօ բառէն հանած ըլլան որ դուրս ցցուած մաս ըսել է , ինչպէս ականջի վարի ծայրը : Այս կերպով լոբիային հունաերուն ձեւին վրայ դաղափար մը կը արուի : »

Ես ալ կը յանձնարարեմ մեր արեւելագիտաց : Գուռ խնդրոյ առկ կը մնայ թէ մեր նախնիք լոբիա կ'ուտէի՞ն թէ ոչ : Կ'ըսեն թէ Մեծն Կարոլոս չատ կը սիրէր լոբիան , իսկ Հայաստանի մէջ լոբիային մուտ դանելը չդիտցուիր թէ ե՛րբ տեղի ունեցած է : Մեր դժբաղդ նախահարք , ո՛րքան պատուական բաներէ դրկուած են կանուխ ծնած ըլլալնուն պատճառաւ : Անցեալները մեր բարեկամներէն մին , որ չատ կը սիրէ ընթրել , կ'ըսէր թէ — « Կը դոլամ երբ կը մտածեմ թէ եթէ աւելի կանուխ ծնած ըլլայի , պիտ' դրկուէի ընթրելէն : »

Ես ալ կը ճանչնամ լոբիայէն դրկուելէ դոլացողներ : Ապրի՛ Լոբիան :

Յ. ԵՈՒՍՈՓԵԱՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԵՓՐԱՏԱՅ ՏԵԼԴԱՆ

Եփրատ իւր երկու ճիւղերով կը կազմէ մի դեղեցիկ պեղտա ընդ մէջ ունենալով լայնատարած տարածութիւն մը լերանց , դաշտաց , հովտաց և անտառաց : Մի ճիւղն որ սովորաբար մեծ Եփրատ կը կոչուի , կարնոյ դաչտերէն բղխելով կը կտրէ կ'անցնի համանուն դաչտէն , Դերջանի մէջէն , Երիզայի մեծ հովիտէն կ'իջնայ Թարանդեաց գաւառը (Բէմահ) և Անի ամրոցին եղերքը ծածելով կը մտնէ Ակնայ ձորը . և անոի ընդ հարաւ սահելով կը բաժնէ մեծ ու փոքր Հայքը և երբ Կիւմիւշ-Մաստէնին կը մերձի (Հնումն Կապան) անկից երեք ժամ հեռու

կ՚ընդունի իր մէջ իր միւս ճիւղն, Արածանին որ Ծարիեայ լեռնէն (Ալա տաղ) ծագումնառած կը ճանապարհորդէ զուգահեռաբար տակաւ առ տակաւ մերձենալով Եփրատին՝ չափելէ անցնելէ յետոյ զլխաւորաբար Մշոյ մեծ դաշտատափէն, Կինճայ լերանցամէջներէն, Ձալաղջուրի հովիտէն, Բալուայ ընդարձակ դաշտէն, Բարբերդու սահմանակցութենէն և Զիլկածագի եղերայց հատնելէ վերջ ի խառնուրդս երկուցունցն: Ա. յս երկու ճիւղերուն առանձին ընթացքը չէ լինչ պակաս իւրաքանչիւրին քան 300 հաղարամեթր, մօղ մանուածապատ ոլորտապտոյտներն· իրենց ամենէն մեծագոյն հեռակէտն, այսինքն մեծագոյն տարածութիւնն իրենց միջանկեալ անջրպետին կրնայ հասնիլ 240 հազարամեթր: Միոյն ուղղութիւնն է արեւելեան հիւսիսէն հարաւ· (Եփրատ), միւսին՝ արեւելքէ արեւմտեան հարաւ· իսկ իրարու նկատմամբ կրնայ նկատուիլ Եփրատն արեւմտեան, Արածանին արեւելեան ճիւղ:

Այս տեղւոյն մէջ կը գտնուին Կարնոյ մի մասն, Դերջանայ, Եղեղեցայ, Դարանաղեաց կէսն, ամբողջ Տարօն (Տէրսիմ)· Զիլկածագ, Չարսանճագ մեծագոյն մասն Բալուայ, Ձալաղջուր, մասունք լինչ Կինճայ, ընդարձակ հատուած մը Մշոյ և իր մերձակայ դաշտաց, և սոցա բոլորին ջուրերն զանազան դիրքով կը վազեն Եփրատայ այս կամ այն ճիւղին մէջ, որոց գլխաւորքն են Զարսլուհուր, Կինճայ վտակ, Մեղրագետ, Օրօր կամ միւս Գայլ գետ, Մնձուր որ յԱրածանի կը թափին, իսկ մեծին Եփրատայ գլխաւոր օժանդակն է Գայլ գետ: Ինչպէս օժանդակաց բազմութենէն կրնայ մակաբերուիլ, Արածանին աւելի յորդահոս և առատաջուր է· բայց սովորաբար Եփրատն Մեծ կը կոչուի, և ասոր պատճառ լինիմ յայտնի չէ: Այս գետին վրայ նշանաւոր կամուրջքն են՝ առաջին Սուլուխ գիւղին մօտ Մշոյ դաշտին մէջ Արածանիի վրայ, Լէնկթիմուրեան ձեռակերտ, երկրորդըն Երիզայի դաշտին մէջ Եփրատայ վրան, հաւասար միւսին մեծութեամբ բայց ոչ ամրութեամբ: Իսկ Բալուայ և Կինճայ մերձակայ կամուրջներն չեն հանդուրժեր երեւելի հրաշակերտներ: Առանցմէ ի զատ հարկաւոր են տակաւին բազում կամուրջներ, բայց լաստախայտեր կամ մահակրաւէր նաւակներ կոչուած են առ այժմ նոցա վրայ անցք վարձք ընդունելով բազմադիմի արկածներ և մինչեւ իսկ կենաց, մօղ թէ անթիւ ընչից կորուստներ:

Նաւարկելի են երկու ճիւղերն միանգամայն մինչեւ իրենց մեծ ընդունարանն (Պարսից ծոցը)· սակայն մերձակայ բնակիչք այնքան քիչ օգուտ կը քաղեն այդ բնական առաւելութենէն որ ապարդիւն մնալ կը նկատակէ: Մշոյ դաշտէն Կինճայ սահմանը մտած տեղն Արածանիի մէկ կըրկնի և երիզայէն Դարանաղեաց (Բէլեխ) հողը արշաւած տեղը Եփրատայ մի նեղ անցքն առ այժմ բոլորովին աննաւարկելի մօղած են այդ երկու ճիւղերուն նշանակեալ տեղերէն վեր գտնուած մասերն, անոնաւարկելի՝ այսպիսի ժողովրդեան մը համար միայն, եթէ ոչ Եւրոպացւոց շատ հեշտ է այդ բնական խոչընդոտներն իսկ բառնալ: Իսկ անոնցմէ վար դուն ուրեք լաստեր կը գտնին և անոնք ալ չեն կարող հոսանքն ի վեր գառնալու:

Թէ՛ Արածանի և թէ՛ Եփրատ ագահ ժլատութեամբ կը պահան ջուր մատակարարել իրենց եղերայց, դի կ՚ընթանան երկրի մակերեւոյթէն խիստ խորութեամբ, նոյն իսկ Մշոյ և Երիզայի դաշտաց մէջ· հապա Բալուայ դաշտէն մի երկու դիւղեր ջուր կըրնան ընդունիլ, նոքա ալ անդադրոյս կը տուժեն յաճախ ենթարկուելով ողղմանց· սակայն արուեստական մեքենայներով կարելի էր օգտուիլ այս առատաջուր գետէն, եթէ գիտնային տեղացիք: Եւ մինչեւ ե՞րբ ապա այսքան թեթեւ արուեստներ իսկ անծանօթ մնան . . .

Արածանիի եղերքը գտնուող քաղաքն է Բալու միայն, որ եղերքը կը թրջուի· իսկ 4–5 ժամ հեռու եղողաց մէջ նշանաւորքն են Մուշ և Քարբերդ, կը յիշուի նաեւ Զիլկածագ և Ձալաղջուրի քաղաքագիւղն Զէվիկ:

Եփրատի դէմոյն է գլխաւորաբար Ակն որոյ ժայռերը մշտապէս կը թանայ· Երզնկա 1 ժամ հեռու է: Դերջանայ կեդրոն Մամախաթուն աւանն և Բէլեխ գիւղաքաղաքն (Անի Ամրոց) թէպէտ նոյնպէս Եփրատի ջրով կը թրջուին, բայց նշանակելի տեղեր չեն: Երկուց միւթէնէն վար եղածները չեմ յիշեր հոս:

Եփրատայ փելէքան կը պարունակէ իւր մէջ մի ուրիշ փելէք ևս, որ կը բաղկանայ Օրօր կամ միւս Գայլ գետակէն, այն՝ որ կը հասնի Պինկէօլէն և Մնձուր գետէն, որ կը ծագի համանուն լեռներէն: Առաջինն արեւելքէն, երկրորդն արեւմուտքէն կը վազեն և հետզհետէ մերձենալով Զարսանճագի մէջ Բերրիէն 2½ ժամ հեռու կը միանան և բաւական տեղ ընթանալէ յետոյ Եփրատը կը թափին: Եւ այսպէս ահա կը գոյացնեն փելէքի մէջ փելէք. սոցա իւրաքանչիւրը մէկ մէկ կամուրջ միայն ունին, Օրօրինն Բլի-Գասապային մօտ, Մնձուրինն Բէրրիէն 2 ժամ հեռու: Չեռեւապէս սոքա եւս լաւերով փոխադրութիւն կընեն դէմացէ դիմաց կամ հոսանքն ի վար, յաւէտ չմոռնալով իրենց վարձքն —կորուստ կենաց և ընչից—: Կամուրջներու պահպանութիւնն որքան զգալի է, այնքան ակներեւ է այս մասին ցոյց տրուած անտարբերութիւնը:

ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ

1884 Նոյեմբեր
Վան

ՆՈՐԱՎԷՊ

ՍԻՋԱՆ

Հոկտեմբերի երկրորդ օրն էր, երբ Բէբր իւր վերջին պատան ըրաւ իմ թեւիս յենած: Տարիէ մ'ի վեր նշանուած էինք, բայց իւր հիւանդութիւնն, յաճրընթացիկ եւ դրեթէ անուշ հիւանդութիւն մը, յետաձգած էր մեր ամուսնութիւնն: Երեք առաւ ի վեր ոչ եւս կը յուսայի: Օրն ի բուն գնա կը մթնէր, խնդալով անոր տխրութեան վրայ. պակայն դիշերը կ'արտասուէի: Երբեմն մեր մտաց մէջ յուսոյ ճառագայթ մը կը ծագէր: Անկարելի կը թուէր որ Աստուած զմեզ իրարմէ բաժնէր միացնելէ առաջ, և մեր երիտասարդութիւնը մեզ յիսուսեան կը թուէր, ուր պիտի երթայինք անցունել մեր երջանկութեան առաջին օրերը, կամ դէպի Փարիզ, ուր մեզ կ'սպասէր կապոյտ անդուսուզ զարդարեալ լեռն և խնկաբոյր վոքրիկ սենեակ մը:

Բէբր ինքզինք ի վէնետիկ կը տեսնէր, ուր իւր վոքրիկ դուռնթաւի ձեռները կը տաքցնէր արեգակին. կամ ձմեռնային պարահանդէսէ մը դուրս կ'ելնէր, դողդոջուն իւր սպիտակ մկինոցին ներքեւ, երկանիւին մէջ ինձ հետ միայնակ, իմ ուսիս կրթնած՝ սիրուած կնոջ մը հեշտալի չարժումներով: Դժբաղդաբար, ծառուղիէ մը դառնալու ատեն դէպին աերեւ մը անոր ոտից առջեւ կ'իյնար, և կ'զգայի իւր մարմնոյն սարսուիլն իմ թեւիս տակ: Այն ատեն ձեռացս մէջ կ'առնուի իւր գլուխն, համբուրելով իւր թուխ մազերն, լիաթոք ըմպելով այն երջանկութեան բաժակէն՝ որոյ յատակը կը տեսնէի:

Այն երիկունը կ'սպասէինք Բէբրի դըպրոցական բարեկամուհիներէն միոյն, օրիորդ Սիւզան տը Լիւքսի: Մէկ երկու անդամ փարիզի մէջ հանդիպած էի անոր, և հիացմամբ ու երկիւղիւ խառն յիշատակ մը պահած էի այդ խարտեաշ գեղանի աղջիկէն:

Տուն դառնալու ատեն, — Բէբր սովրականէն աւելի տխուր էր, — զրանդին վրայ կեցած՝ մեզ կ'սպասէր Սիւզան: Երբէք չպիտի մոռնամ իմ հէք Բէբրիս նայուածքն, երբ տեսաւ իւր հին բարեկամուհին այնքան գեղատի և այնքան գեղանի. վախցաւ և իւր աչերն հոգեպիղ իմ վրայ յառեցան:

— Զա՛ր, ըսի պինքը դրկելով, ինչո՞ւ այդպէս կը նայիս ինձ: Մի՞թէ չե՞ս դիտեր թէ միշտ զքեզ պիտի սիրեմ:

— Մի՞շտ, ըսաւ, նոյն խակ յետ . . .

Սիւզան արդէն մեր քով հասած էր:

— Ես եմ, ըսաւ. ելայ եկայ, որովհետեւ կ'երդնուիս որ կարի անհանգիստ էի: Ինձ ըսած էին թէ չատ հիւանդ ես, բայց կը տեսնեմ որ բան մը չկայ, միայն քիչ մը դեղներ ես . . . Այս ձմեռ քանի մը պարահանդէսներու, հացկերոյթներու, Օպէրան կ'երթանք և առաղջութիւնդ խակոյն կը վերադառնայ . . . Մնաց որ, այս դիշեր երկար բարակ պիտի խօսինք: Բեզ պիտի պատմեմ Փարիզի պատահարներն, անհաւատալի պատմութիւններ . . . Եւ ես որ դուզ ելայ քեզ համար: Այտերդ կարմիր են և աչերդ կը փայլին որպէս թէ պարահանդէսի մը մէջ դանուէիր . . .:

Նոյն դիշերն խակ մեռաւ Բէբր: Թեւերուս մէջ աւանդեց հոգին, և աչերը գոցեցի երկու համբոյրներով:

Դղեակին վոքրիկ դերեզմանատան մէջ թաղել տուի զնա, հինաւուրց նոճիի մը ներքեւ, այն տեղն իսկ ուր իրիկուն մ'ուզած էր որ իւր քոյր ծնրադրէի:

Քանի մը օր դնացի միայնակ աղօթել նորա շիրմին վրայ. յետոյ, բժշկաց խորհրդով, ստիպուեցայ փարիզ դառնալ: Մայրս կը տառապէր տեսնելով յուսահատութիւնս, ուստի իմ վիշտս կը զսպէի:

Բնականաբար շատ քիչ դուրս կ'ելնէի. բայց ծնողք անդութ բարեւթիւններ ունին, և հարկ եղաւ ինձ երբեմն երբեմն այցելել բարեկամաց տրահներն:

Իրիկուն մը, երեկոյթի մը մէջ, թիկնաթոռի մը կրթնած՝ մեքենաբար կը նայէի քանի մը բարեկամաց ոչխարի խաղալն, երբ յանկարծ զգացի մերկ թեւի մը թեւիս տակ սահիլն, և տղու մը պէս սարսուռի այս հըպումէն:

— Կ'ուզէ՞ք պարելու հրաւիրել զիս, Պ. տը Պալէսթր:

Ցուզմամբ դլուխս դարձուցի և Միւզանը ճանչցայ: Հիասքանչ կերպիւ գեղեցիկ էր այն գիշեր: Զահերու լոյսը Միւզանի մերկ ուսոց վրայ երփներանգ կէտեր կը ցոլացնէր. իւր թեւերը մերկօրէն կախուած էին: Դէմքին վրայ ուրախութեան լոյսը կը փայլէր. կը շնչէր, ունդունքն ուռած, իւր արբշռութեան հեշտութիւններն: Ինձ համար չափազանց մերկ երեւցաւ, զի նորատի աղջիկ մ'էր. այլ այդ մերկութիւն ուրիշ փայլ մը կը յաւելուր նորա գեղեցկութեան վրայ: Ես մանաւանդ, վարժած իմ հէք Ֆլէրիս տարազդեցիկ հրապոյրին, վայրկեան մը կարծեցի չլացայ: Հոգւոյս բոլոր յուզումներն, երիտասարդութեանս բոլոր փափաքներն արթնցան ի յուշ նորա յիշատակին:

Բայց և այնպէս դողդոջուն ձայնիւ պատասխանեցի.

— Գիտէք անշուշտ թէ ոչ եւս կը պարեմ:

Արդէն, նշանածիս մահուանէ յետոյ, Միւզան չանացած էր ինձ մոռեցնել. չամախ եկած էր մայրս տեսնելու, բայց ես միշտ իրմէ կը փախչէի, դրեթէ կ'երկնչէի:

Աչերը խոնարհեցուց:

— Նոյն իսկ ի՞նձ հետ, ըսաւ:

Ցետոյ աւելի ցած ձայնիւ, և իւր հընչիւնն անուշ ու մխուր էր.

— Իւր բարեկամուհին էի ես:

Նուաղածուք կ'սկսէին դերասանական այն վայելքն վին՝ որք յատր, դրեթէ տըխրագեղիկ են: Պարեցի նորա հետ: Վալսին վոտքորկայդ յորձանքին մէջ կ'ըսէր ինձ.

— Երբ ձեր անցնիլը կը տեսնեմ ուրուականի մը պէս ժժդոյն և դունաթափ, արտասուելս կուգայ: Շատ կը սիրէի Ֆլէրը, խիստ շատ: Կը վտիտքէի երբեմն ձեզ հետ խօսիլ անոր վրայ. մեր երկուքին մէջ մեռաւ նա: Ինչո՞ւ կը փախչիք ինձմէ: Կ'ուզէի ձեզ ցուցնել նամակ մը, զոր ինձ գրած է ձեզ հանդիպած առաջին իրիկունը: Թերեւս խնդաք զայն կարդալով:

Վալսը լմննալէն յետոյ, խոկոյն դուրս ելայ: Դլխուս մէջէն բիւրաւոր տարօրինակ գաղափարներ կ'անցնէին. կը թուէր ինձ թէ խարտեաշ մազերու խոպոպ մ'այտերուս կը քսուէր և Ֆլէրի համար ունեցած սէրս քաղցր կերպով կը զարթնուր: Թէ' երջանիկ էի և թէ' գժդոհ իմ անձէս. դիշերըն ողջոյն երազեցի կնոջ մը վրայ, որ թէ' Միւզանն էր և թէ' Ֆլէրը:

Հետեւեալ օրը վերատին տեսայ զնա. մօրս այցելութիւն տալու եկած էր և իմ հոն դանուելուս համար շատ գոհ եղաւ: Ֆիչ մը ժամանակ խօսակցեցանք. յուսացածէս աւելի պարզ կերպով վարուեցաւ ինձ հետ. բարի թուեցաւ ինձ և անկեղծաբար յուզուեցաւ կարդալով այն նամակն, յորում Ֆլէր դաղտնաբար կը պատմէր նոա մեր առաջին տեսակցութիւնն:

Ուրախ եղայ այս այցելութենէն յետոյ, և մայրս նչմարեց զայս, ինք որ դիտէր թէ վեց ամսէ ի վեր միշտ տխուր էի: Իւր խնամոց չնորհիւ՝ Միւզանի կը հանդիպէի ամեն դիշեր իմ յաճախած երեկոյթներուս մէջ:

Տակաւ առ տակաւ ես իսկ սկսայ փընտրել այն առիթներն որք զիս անոր կը մօտեցնէին, և որովհետեւ ինք ալ բոլոր միջոց ի գործ կը դնէր ինքզինք սիրցնելու համար, օր չէր անցներ որ իրարու հետ չխօսէինք իրր երկու բարեկամներ:

Մինաց որ, կը զարմանայի թէ Ֆլէրի յիշատակն ոչ եւս կը խռովէր մեր նոր սէրն. չամախ մոռացա աւջիւ կը բերէի դղեակին վոտքորկայդ դերեզմանատունն ուր կը ննջէր նչանածս: Միրաս, մխիթարանաց այնքան կաթսա, կ'սխուէր երբ միտքս կը բերէի իմ խոստումներս զոր մերձ էի մոռնալու:

Գարնան օր մը, մայրս ըսաւ ինձ.

— Սիւզանի հետ առաւոտացնել կ'ուզեմ գքեզ:

Ինչի վրայ մոռածեցի, այլ պատասխանեցի.

— Լա՛ւ:

Եւ հետեւեալ իրիկուն ամենուն առջեւ կը սեղմէի փափուկ ձեռք մը, որ քիչ մը կը դողդողար:

Ապագայ կինս պատուհանի մ'առջեւ տարի և ըսի.

— Կը սիրեմ գքեզ, գիտես զայս. ա՛յնչափ կը սիրեմ որ Ինչերի ըրած խոստումներս մոռցայ: Բայց կ'զգամ թէ արդէն ներած ես նա, որովհետեւ ա՛յնքան բարի ես դու որքան գեղանի, և անոր յիշատակը նուիրական պիտի լինի մեր երկուքին համար: Վաղը մեր դղեակը պիտի երթամ անոր չիրմին վրայ աղօթելու, և մեր առաւոտութեան օրը պիտի վերադառնամ, որովհետեւ կ'ուզեմ որ մեր միութիւնն իմ երդմանցս դժուար մը չլինի, այլ միայն շարունակութիւնն իմ առաջին սիրոյս:

Խօսելու ժամանակս, Սիւզանի ժպտուելը կը տեսնէի, և իւր շրթունք կը դողդղալին:

— Շարունակութի՛ւն, գոչեց... ո՛հ, ո՛չ, կ'ուզեմ որ դիս սիրես միայն ինձ համար:

Իւր տրիտը կը բորբոքէր տեսնելով թէ սիրոս Ինչերի և իւր միջեւ բաժնուած էր: Եւ յետոյ դողդողուն ու բարկութենէ երերուն ձայնով մը կը յաւելուր.

— Ա՛յսպէ՛ս, իւր բարեկամուհին լինելուս համար ինձ հետ կ'առաւոտանաք: Կը համիք ինձ ընծայել սէր մը, որոյ ճշմարիտ գործովը ուրիշի մը տուած էք: Ձեր կինը լինիլ կ'ուզեմ. ձեզ համար ամեն ինչ լինիլ կ'ուզեմ, ինչպէս դուք ամեն ինչ էք ինձ համար, կը հասկնա՞ք... Եւ չեմ հանդուրժեր որ մեռեալի մը յիշատակը գայ պղտորել մեր ուրախութիւններն և ցրտացնել մեր հաճոյքները:

Իւր չրթանց վրայ վերստին կը տեսնէի այն անդութ ժպիտն որ նախ դիս յանկուցած էր, և իւր ուսոց այն բարձրացումն, որ կնոջ քով զօրաւոր կամքի մը անվրէպ նշանն է:

— Լա՛ւ, ըսի իրեն, վաղը մեն միայնակ դղեակ պիտի երթամ:

Հետեւեալ օրը, սրտաբեկ, դղեակ կը հասնէի, հետս ունենալով մայրս որ կը սոսկար այս գժտութեան վրայ, թերեւս վերջնական: Բայց, հակառակ իմ կամքիս, մոռցայ՝ ի տես գարնան՝ իմ զգացած վիշտերս: Մտնելով այն փոքրիկ ճանքառն մէջ, որոյ ծայրն այնքան յաճախ գնացած էի աղօթել, հառոյքով շնչել սկսայ: Հողին երեսէն, խոտերով ծածկուած փոքրիկ ջրանցին անտառակներէն, հազար մոերիմ չչուկներ, բիւր սօսափիւններ ականջիս կը հասնէին: Կանաչագեղ ծառոց մէջէն թռչունք զուարթագին կը ճլուզլային:

Երբ պարտէզին դէրեզմանատան առջեւ հասայ, կապոյտ թխկատար մը փայտեայ խաչին վրայ թառած կ'երգէր: Նոտայ այն սպիտակ քարին առջեւ, որոյ տակ Ինչեր կը հանդչէր, և երկարօրէն խորհեցայ: Աչացս առջեւ կը տեսնէի գնա, ինչպէս այն լուսաշող օրերուն մէջ ուր թեւիս կը յենուր, մինչդեռ դիւրար կը դրկէինք ծառոց հովանւոյն ներքեւ: Ա՛յս բաներն ի յուշ ածելով կը հրճուէի, երբ ծաղիկ մը նշմարեցի չիրմին վրայ, մին այն ծաղիկներէն որք ո՛չ անուն ունին և ո՛չ բոյր, և որք անկիւն մը կը ծընանին և ընդհատ կը մեռնին՝ առանց իրենց բաժինն ունենալու արեգական ճառագայթներէն, նման այն աղքատիկ տգեղ աղջկանց, որք կ'անցնին այս աշխարհէս՝ առանց մխիթարութեան և առանց ակնարկի մը:

Նոյն վայրկենին հոգիս խեղճական դաւառներուն մէջ կը թափառէր, ուր կ'զգաս տարտամօրէն ծաղկանց և թռչնոց խօսակցութիւնը՝ մուխին կամ կապոյտին մէջ կորսուած հոգիներու հետ: Այսպէս կարծեցի տեսնել այդ մանիշակագոյն ծաղկին մէջ Ինչերի հոգւոյն մի կտորն, որ հոն բուսած էր իմ երդմանցս վրայ հսկելու համար: Այնքան երազացնող ու խոհուն էր, որ վայրիկ մը թուեցաւ ինձ տեսնել ծաղկին ի գետին խոնարհիլն, թարշամած ու տխուր, և ուղեցի սփոփել զայն:

— Ամեն առաւօտ պիտի դամ գքեզ իմ արտասուքովս ոռոգելու, ո՛վ իմ բարեկամուհիս, ըսի ծաղկին. այլ եւս քանէ մը մի՛ վախնար, որովհետեւ այժմ հաւատարիմ եմ քեզ և միշտ պիտի լինիմ:

Պատուղոյն մէջ թեթեւ ձայն մը և պատին քսուող չրջագգեստի մը խշրտիւնն

պիս սարսռեցին։ Գլուխս դարձուցի և կին մը տեսայ որ դերեզմանատան փոքրիկ դուռը կը հրէր։ Սիւզանն էր։

Զնա տեսնելով՝ ոտք ելայ խռովուն և չուարած։

— Ես եմ... ըսաւ։ Եկայ որ քեզ հետ աղօթեմ։

Եւ ձեռներէս բռնելով, յարեց.

— Ներէ՛ ինձ. Թերեւս անդթաբար վարուեցայ քեզ հետ, բայց դքեզ ա՛նքան կը սիրեմ։ Ա՛յսօր կը հասկնամ դքեզ և կը վերադառնամ, դրեթէ հակառակ իմ կամքիս... Չէի կրնար դիմադրել... ի՛ուր դէմ դքեզ տեսնել... չէի կրնար հաւատալ թէ այսպէս պիտի մոռնաս զիս։

— Զքեզ մոռնա՛լ... երբէ՛ք... Ա՛յժմ երջանիկ եմ։ Երկուքս ալ ներողութիւն խնդրենք հոս հանդիսղէն և երթանք դրկել մայրս։

Յետոյ անոր պատմեցի իմ առաւօտեան պտոյտիս երազներն՝ և այն դժբաղդ փոքրիկ ծաղիկին ըրած խոստումներս։

— Ա՛յ, այս ամենուն կը հաւատամ, ըսաւ այն ատեն... խե՛ղճ Բլէր։

Հետեւեալ առաւօտուն միասին գնացինք նոյն տեղն, ինչպէս և յաջորդ օրերը։ Ծաղիկը միշտ հոն էր, ամենաթեթեւ հովէ մ՚իսկ ծռելով իւր գլուխը։

Շատ անգամ Սիւզան ըսաւ ինձ.

— Վստահ եմ այժմ թէ այդ ծաղիկը Բլէրի հոգին է։

Կարի յոյժ աւելորդապաշտ էր նա, և ամեն բանի կը հաւատար,

Օրերն արագ կ՚անցնէին։ Բարձրաբերձ ծառոց տակ երջանիկ ժամեր կ՚անցուցինք ամեն օր. իրիկուան դէմ կ՚երթայի այցելութիւն տալ Սիւզանի հեռաւոր ապգականներէն միոյն, որ ապագայ կնոջս ասպնջականութիւն ընծայած էր մինչեւ մեր հարսանեաց աւուր համար։

Վերստին սրբչիս էի երջանկութեամբ. ոչ եւս կը մոռածէի մեր դժուարութեան պատճառաց վրայ։ Ամեն առաւօտ կ՚երթայինք աղօթել Բլէրի չիրմին վրայ և ամբողջ օրն ուրախութեամբ կ՚անցուցինք։

Որոշուած էր որ ամուսնութիւնը մեր դղեակին մէջ տեղի պիտի ունենար։

Հարսանեաց նախընթաց իրիկունը պարտէզին մէջ միայնակ նստած էինք, դիրկընդունած, հոգեպարփշ իրարու նայելով։ Կը թուէր ինձ թէ կուրծքս պիտի պատռէր, սէրն ա՛նքան ղեղուն էր սրտիս մէջ։

— Գո՞հ ես հարսանեկան կողովէդ, հարցուցի նմա։

— Ա՛յո, շատ գոհ եմ, քանի որ դուն ես դրկողը։

— Պակաս բան մը չկա՞յ։

Գլուխս իւր երկու ձեռաց մէջ առաւ և ականջիս վար ըսաւ.

— Փոքրիկ ծաղիկը միայն պակաս է։

Գրեթէ բուռն կերպիւ յետս մղեցի զայն։

— Տակաւի՛ն։

— Լ՛ւ, այո՛, տակաւին։ Կը նախանձիմ այդ ծաղկէն։ Ա՛նքան կը սիրես զայն որքան դիս։

Եւ տեսնելով որ կը դողդողայի, բոլորովին գոյնս նետած,

— Ա՛յլ եւս չխօսինք ադոր վրայ, ըսաւ... Կը յուսայի որ այս երեկոյ...

Վերստին իւր ձեռաց մէջ առաւ գլուխս և գրեթէ բռնութեամբ համբուրեց զիս։

— Կ՚ուզե՞ս որ մոռնանք, յարեց։

— Ա՛յո՛... աւելի լաւ կը լինի. բայց մի՛ դպչիր ծաղկին, հասատա՛ ինձ.... Խենդ կը լինիմ երթէ քեզ հետ չամուսնանամ, բայց մի՛ դպչիր ծաղկին։

Եւ սակայն դպաւ։

Հետեւեալ օրը, մեծ դաշտին մէջ ժողվուած քանի մը բարեկամաց առջեւ կառքէն վար իջաւ։ Գիւղին երեցը դղեակին մէջ պիտի կատարէր ամուսնական արարողութիւնը։ Սիւզան սպիտակ ժանեակէ շղջազգեստ մը հագած էր, և իւր երկարատարտուն շղարշին ներքեւ տեսիլքի մը նման գեղեցիկ երեւցաւ ինձ։

Բայց բան մը իմ ակնարկս գրաւեց։ Իւր կուրծքին վրայ նարնջենիներու ծաղիկ մուճակ մը դրած էր, որոյ ճիւղ մէջտեղը կը նշմարուէր փոքրիկ մանիշակագոյն կէտ մը. Բլէրի ծաղիկը, Բլէրի հոգին էր այն։

Սոսկալի կերպով ժպտունեցայ, և Սիւզանի վրայ վազեցի։

— Ծաղիկը բրցուցե՛ր ես։

— Ա՛յո՛, ժամ մը կինդ պիտի լինիմ, և չեմ...

— Ո՛չ... Ծաղիկը բրցուցե՛ր ես... Դո՛ւն, իմ կիներս... ո՛հ, բնա՛ւ... ի՛ւր տեղ դքեզ։

Եւ ծաղկեփունջը բռնեցի ու երեսին նետեցի. յետոյ նուաղեալ ինկայ մօտ թե-ւերուն մէջ։

Այդ ժամանակէն ի վեր միայնակ կ'ապ-րիմ դղեակին մէջ։ Ամէն ա՛առաջ խնդայ Սիւզանի ամուսնութիւնն հուչակաւոր դի-ւանադէտի մը հետ։

Անհուն ցաւ զգացի այդ լուրն առնելով։

Այլ որոշած եմ հաւատարիմ մնալ Գլէրի. բայց յաճախ, երբ իրիկունը կը մօտենայ և արեւը մայրը կը մտնէ, կ'արտասուեմ վըշ-տադին՝ Սիւզանի վրայ մտածելով։ Թարգմ.

ԷՕԺԻՆ ՊԼԷՌԱ Լ. Բ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՓՇՈՒՐ ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԳՈՑ

Կարմիր մազերով մազերով
Վարդ երեսդ լուս կը ցեխէ նազերով.
Ալեն առտու կ'ելլաս սեհրան,
Ես կը լեռիմ քեզի հեչրան։
Դուն կլօրիկ ազկեկ ճէյրան,
Օավիտ թօզերով թօզերով։

Ազկեկ ես, չուն իս պիճայ,
Ինչո՞ւ կուտաս հոգուս ճաֆայ.
Էկօր էնկը զէվկ ու սէֆայ,
Խուպա խաղերով խաղերով։

Աշըղ Աբթին սէտիաներ տողան,
Մալիկս տամ քեզ Արզաման,
Մազերդ իս էրեր տարտղան,
Գովեմ սազերով նազերով։

Էրեկ ես ազկեկ մի տեսայ,
Թուշը բացուած վարդ կ'ըլմանէր,
Քունէթ ու բերան պզտուտիկ
Ընգուին հիլալ կ'ըլմանէր։

Էլիր էր կանկներ էր պատին,
Վարդ բուհան շարեր գօտին,
Իրեն մնանին դրիր մատին,
Անը գոհար քար կ'ըլմաներ։

Էլիր էր կանկներ էր դուռը,
Ծոցը ունէր քաղցր նուռը,
Հոգիկը զարկեր էր հուրը,
Պզտիկը սեվլի տալ կ'ըլմաներ։

Գովէ՛, լեվկնա, գովէ՛,
Ընգվիդ կամար, աչերիդ ծով է՛,
Ա՛ս ազկեկան տէրը վո՞վ է,
Մորայ սուլթան կ'ըլմաներ։

Կարմիր քարէն կ'ելլէր հովը,
Կը ցաւէր Լուսիկին քովը,
Էրիր Լուսիկ, չէրիր Լուսիկ
Կըլրիճ Շահբազն առիր Լուսիկ։

Լուսիկին Մէրը մազման էր,
Ութ ղրուշ քնթին խզմէն էր,
Ժի ճաթախ ճզմէն էր,
Պոյը խնկենի ծառ էր։

Կարմիր քարէն կարմիր քարէն
Հովը կ'ելլէր վէրէն վարէն,
Լուսիկին մազերը օսկի
Կը թափէր սինճ վրէն էտի։

Շահբազը քունն էր ծախեր
Լուսիկին համար հառչէր.
Արեւն ու օրը տուեր
Տէշմօր սիրածը գրկեր։

Էդեմ դրախտն էնոնցն էր,
Դրախտին դուռը պսակուեր։

—Իմուն ճայիլուկ հարմո՛ւկ,
Երեսդ ինչո՞ւ է մէլուլ
Քու մէկիկ որդուն համար.
—Երեսս ամէն օր մէլուլ
Գիր կենիմ որդիս բերեմ.
—Օր գիր էնես որդիդ բերես
Աստուծոյ լուսը տեսնես,
Օր չէնես, չի բերես,
Կ'անիծեմ, օր քար կը դառնաս։
Կանանչ դաշտ ու դուր մէյտան
Չի տեսար էն ծառ ամիրան
Ան երէկ անցաւ ցերեկից։

Աղբեր մի Մըզա լեռներ
Օլուխն արծաթ են դրեր,
Երկու թուխ, աղուր աղջիկ
Սափորով ի ջուրն նետեր,
Երկու փերհլիվան կըլրիճ
Ձինն հեծեր աչքն են եկեր։
—Աղջի՛կ, պապկանդ արեւուն
Պաիկ մի ջուր տուր ինծի,
—Ջուրս տաք է, չէ պաղեր,
Մեր սիրուն շատ մարդ մեռեր.
—Ջուր տուր օր մենք ըլ մեռնինք
Ամենքդ քի մեր մեր չէ ձներ։

Ձիս քո սիրուն, ո՛վ նազելի, հովերն առեր կը մազէ,
Օտարին լեզուն աւելի ցաւ եղեր, դիս կը տապէ կը տապէ,
Ա՛յս կարօտիս չեմ դիմանար, միշտ գՀոգիս կը քաղէ,
Դէպի երկիրն իմ սիրելուն առնէ՛ր տանէ՛ր Հոգիս դիս, Հոգիս դիս։
Թզճալի իմ՛ու ցաւալի արտասուիկին նըմմանիմ
Որ սիրոջը կարմիր վարդին տակին սուգ մնանիմ մնանիմ,

Ես սար ու ձոր շրջաբերիմ, խնդրեմ և ոչ գտանեմ,
Դեպի երկիրն իմ սիրելուն առնէ՛ր տանէ՛ր հոգիս գիս,
հոգիս գիս։
Սրաթեւ թռչնակ լինէի, թռչէի ո՛ւր կամէի,
Դեպի այդին իմ սիրելուն փչող հովերն լինէի,
Թեթե՛ւիկ ամպիկ պիտէի, հովուն առջեւ ընկնէի
Դեպի երկիրն իմ սիրելուն առնէ՛ր տանէ՛ր հոգիս գիս,
հոգիս գիս։

Մեկ աղնիւի մի ի սէր անկայ ի գլխէս
Դիշերն երազէս, ցորեկն ի սրտէս
Կորուսեր եմ զիմ անմահն սիրելիս.
Աչոր համար կը պատրիմ ի սարերն ի ձորերն։
Ի միտս որ գայ, կը թռչի խելքս ի գլխէս,
Աչերս արիւն կը բոլորի ի սրտէս,
Ղարիպ եմ ես, որ ելեր եմ երկրէս,
Աչոր համար կը պատրիմ ի սարերն ի ձորերն։

Կէս դիշերուն մէջ երածիս մայրաց
Բանը տեսայ, ես ըլ Հայոց հաւասեցայ,
Հայոց Տեառն նշանը տեսայ,
Տէրը տուեց մեզի խաչը,
Քրիստոս տանէն եկաւ խէչը,
Սուրբ բաժակն էնոր լուսեղէն սիկիհը տեսայ։
Տուչկուն օղին կանչեց խաղը
Չէր ելլեր սիրտիս տագը
Ես կը մեռնիմ էսօր վաղը
Մահուս Տեառնէնշանը տեսայ։

Ես ալ աշխարհիս բաներն իմացայ,
Չրկեցի մարմինս ծոմ ու պաք կեցայ.
Ժամ գացի դաւանեցայ մասուեցայ,
Քահանային սրբոյս բացեր եմ էսօր։

Իակի սուտ է աս ամէորիս բաները,
Թողեր ենք կ'երթանք մեր նոր տները,
Ան դեմը ընկաք Թերքի ձէնն հայի՛ֆ,
Էս աշխարքս կեցեր իք ես օր։

Իմէրը տամնհ չունէր աշխարքին մալին,
Վա՛յ էր օր հարամը խառներ հէլալին.
Օր մը դուգայ հոգուն առնող ճէլալին,
Գատաստանին օրը ճուդաս տալ Պէտին։

Ձայնիկ հառաչը վրայ ձագին,
Կուռը թաւեր իր հաւքնին,
Իս ի՛նչ օր էր որ ես տեսայ,
Զադուկիս վէյտը տուն բերին։

Արար աշխարհ տուշման եղան
Կարմիր ձօն գայ տուն ընկերներն
Գէլուն ճանկն ընկնի գազանին։

Թորիկս էր պատկեր ժամուն տաճարը
Գլոխն էր գրեր պիլօրին տակը
Խերդէն էր ցեցկեր քէնքուլին տակը
Վախն արեւուդ խէտէտ առնեմ Թորիկս։

Թորիկիս բերէ՛ք, շապիկ հագուցէք,
Թորոսիս հասէք կարմիր ձգեցէք,
Թորոսիս շրլլին պաշմիկ պլէցէք,
Վախն արեւուտ խէտէտ առնեմ Թորիկս։

Փեսամանդիք եկան դուռը մնացին
Կերան, խմեցին գառնագոչեցին,
Փեսամանդիք, գացէք, հողը բացէք գացէք
Ջուր տաքցուցէք տաքուկ շղ
Ալանա լոգցուցէք, Ալանա պատեցէք։

Հաւաքեց
Ց. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԶԱՆԱԶԱՆՔ

ՏԱՍՆԵՐԵՔԱՄԵԱՅ ՄԱՐԴԱՍՊԱՆ ՄԸ

Վէնդզէյս անուն տասներեքամեայ տղայ մը վերջին օրերս Սէնի երդուեալ դատաւորայ առջեւ կ'ելլէր իւր վարպետն սպանած լինելուն համար։

Ոճրագործութիւնը տեղի ունեցած է անցեալ ամսոյ 22ին, Պուրժ քաղաքին ամենէն բազմամարդ մկ փողոցին մէջ, երեկոյեան ժամ 9 ին։ Ոճիրը կանխամտածուեալ դործուած է, որովհետեւ ամբաստանեալը քանի մ'օրէ ի վեր իւր վրայ կը կրէր երկայն դանակ մը։ Բաց աստի, չուրացնար բնաւ իւր մարդասպանութիւնն և կը յայտնէ թէ այն կերպով կատարած է զայն, որպէս կարդացած էր Պէլ ծէ-լէ անուանեալ վիպասանութեան մը մէջ։

Կ'երեւայ թէ այդ դիրքն, որոյ հեղինակին անունը չյիշատակուիր ամբաստանագրոյն մէջ, կը պարունակէ պատմութիւնն չար ստանակի մը, որ իւր վարպետէն վրէժ լուծելու համար, դրան մը ետին կը պահուըտի դաշոյնով մը պինեալ, և այն վայրկենին ուր վարպետը կը մօտենայ առանց բան մը կասկածելու, վրան կը յարձակի և դաշոյնի հարուած մը կուտայ սրտին։

Վէնդզէյս տարիէ մ'ի վեր կ'աշխատէր Բիկոլէ անուն անուշավաճառի մը քով, որ քանի մ'անգամ սպառնացած էր վռնտել զայն իւր քովէն։ Իւր ծնողներն ապդարատրեցին իրեն որ եթէ ուրիշ անգամ դանգատ լսէին իւր վրայ, խիստ կերպով պիտի պատժէին զինքն։ Միւս կողմէ վերոյդրեալ վիպասանութեան մէջ կարդացած լինելով որ տղու մը կողմէ գործուած ոճիրը կը պատժուի պղտատարանի մէջ մինչեւ ըչափահասու-

ութիւն պահելով ոճրագործը, միաքը դնելով որ մեծ վտանգի մը չէր ենթարկեր իր անձն, և անցեալ ամսոյ 22 ին, դուրս չկենալով որ սպիտի պատժուի ասլակի մը կատարած լինելուն համար, որոշեց սպաննել իր վարպետը: Ասոր երկայն դանակ մ'առնելով, երեկոյին դնաց պահուըտիլ դրան մը ետեւ, այն տեղին մօտ ուր Բիկոլէ ամեն իրիկուն կ'երթար ձեռները լուալ պառկելէ առաջ:

Սակայն նոյն վայրկենին վարանեցաւ և ձեղնայարկի սանդուղքէն վեր կ'ելնէր, երբ Բիկոլէ ոտից ձայնը լսելով ետեւէն դնաց և հարցուց թէ ի'նչ կ'ըներ անդ: Վէնդզէյս այն տեն ոչ եւս վարանեցաւ, և առանց բառ մ'արտասանելու, դանակով ուժգին հարուած մը տուաւ իր վարպետին սրտին: Բիկոլա դիտապատա դետին ինկաւ, և հապճեպ ժամանակ ունեցաւ օդնութիւն կանչելու: Երբ դրացիք հասան, ամեն ինչ լմնցած էր և մարդասպանը միայն կրցան ձերբակալել:

Անհաստանագիրը կը հաստատէ թէ Բիկոլէ լաւ վարպետ մ'էր, և թէ դէշ վիպասանութեան մը ընթերցմամբ վէնդզէյսի գլխուն մէջ առաջ եկած խանգարումներն էին միակ պատճառ ոճրագործութեան:

Անհաստանելոյն վաստաբանն այս իսկ պաշտպանած է, և երդուեալ դատաւորք, յայտարարելով որ վէնդզէյս գործած էր առանց որոշելու, անպարտ արձակած է զայն: Դատարանը որոշեր է որ դպատարանի մը մէջ սպիտի վակուի մինչեւ իր քսան և մէկ տարին: Երբ անոի ելնէ՝ աւելի լաւ դպացումներ պիտի ունենա՞յ. — Տարակուսելի է այդ:

ԲԼՈՐՈՅՈՐՄԵԱՆ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՋ ՄԸ

Հիւսիսային Ովկիանոսէն եկող չոգենաւ մը վերջին օրերս Համպուրգ կը հասնէր:

Շոգենաւին ուղեւորաց մէջ կը գտնուէր նաեւ սպիտակ արջ մը, որ փակուած էր հատուածուն վանդակի մը մէջ: Աւտիկ ինչ զուարճալի իրողութիւն մը կը պատմուի այդ արջին վրայ.

Գիշեր մը, նաւաստի մը կը նշմարէ թէ արջն յաջողած էր իր վանդակին թելերը քակել և դուրս ելնել: Հաւժկու կենդանին ի մի ոստիւն իր բանտէն դուրս կը նետուի և ուղղակի բեռանց տեսչին խցիկը կը դիմէ: Այս վերջինը, տեսնելով տարօրինակ այցելուն, առանց ձայն հանելու կ'երթայ իրաց տալ նաւապետին:

Այս միջոցին արջը վերնայարկը կ'ելնէ և ուղղակի խօսարանը կը մտնէ: Անկարելի է նկարագրել ուղեւորաց ահ ու սարսափն: Նաւապետն իսկոյն կը դոցէ խօսարանին դուռը, յետոյ քլորոֆորմով լի տոպրակ մը կապելով ձողի մը ծայրը, պատուհանէն ներս կ'երկնցնէ կենդանւոյն քիթին տակ:

Գործողութիւնը կատարելապէս յաջողեցաւ: Քանի մը վայրկեան վերջ, արջը դադրեցաւ շարժելէ և այնքան խոր քունի մը մէջ ինկաւ որ պինքը բռնեցին և իր վանդակին մէջ վերահաստատեցին՝ առանց ո և է դժուարութեան:

ԿԱՂՈՒԱԾ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

17–23 ՆՈՅԵՄԲԵՐ

ԱՐՏԱԴԻՆ

—

Ֆրանսայի երեսփոխանաց ժողովը նոյեմբեր 26ի նստին մէջ մեծամասնութեամբ ընդունեց Թունքինի համար նկղբուած երկու տարբեր վարկեր, որոց դումարն չիւռն միլիոն ֆրանքի կը հասնի:

— Րումանիոյ խորհրդարանք բացուեցաւ նոյեմբեր 26ին. այս առթիւ կարդացուած արքայական ճառը կը հաստատէ թէ Րումանիոյ յոյժ մտերմական յարաբերութիւններ կը տածէ ամեն տէրութեանց և մանաւանդ իր դրացւոց հետ:

— Մարսիլիոյ երեսփոխանին ամուսին տիկին Ֆլովիս Հիւկ անցեալ շաբթու փարիզու դատական պաշտօնատան մէջ ըէվոլվէրի հարուածով մարդ մ'սպաննեց, որ յոյժ նախատալից կերպիւ թշնամանած էր իր ամուսնական պատիւն, և զոր արդէն դատապարտել տուած էր իբր զրպարտիչ:

— Անգլիական կառավարութիւնը կէս պաշտօնական կերպիւ մտքանի մեծ տէրու-

թեանց հաղորդեց Եգիպտոսի ելեւմտից բաբեռնորդման վերաբերեալ ծրագրին։—Այս ծրագրի երկու գլխաւոր կէտերն են. 1. Հինգ միլիոն անգլիական ոսկւոյ փոխատուութիւն մը 100 ին 3 1/2 տոկոսով, անգլիական կառավարութեան կողմէ երաշխաւորեալ, որ պիտի դործածուի Եգիպտոսի երերուն պարտուց դլխավճարին։ 2. «Եգիպտական Ընդիմիջ» և «Տայրա Սանիէ» արժէթղթոց տոկոսին 100 ին 3 1/2 ի իջնելը։

— Ֆրանսայի նախարարաց խորհուրդն որոշեց երկու ֆրանք աւելցնել Ֆրանսա ներածեալ ցորեններու և ալիւրներու մաքսատուրքին վրայ, որով ամբողջ մաքսատուրքն, որ առաջ 60 սանթիմ էր, այժմ 2 ֆրանք և 60 սանթիմ կը լինի։

— Անգլոյ երեսփոխանական ժողովը առաջին ընթերցմամբ ընդունեց ընտրական շրջանակներու վերաբաշխման վերաբերեալ օրէնքը։

— Բեդրասպուրկի անգլիական դեսպան Սըր Էտուարտ Թորնթըն Կ. Պոլսոյ դեսպան անուանեցաւ, և Մատրիտի անգլիական դեսպան Սըր Տ. Մորիէ՝ Բեդրասպուրկի դեսպան անուանեցաւ։

— Վաշինկդոնի մէջ խորհրդարանի քացման առթիւ կարդացուած նախադահական ճառը կը հաստատէ թէ Միացեալ Նահանգք կը շարունակեն մտերմական յարաբերութիւններ տածել օտար տէրութեանց հետ։ — Նախագահական ճառը խորհուրդ կուտայ արծաթեայ դրամ կոխելը դադրեցնել տալ։

— Գերմանիոյ երեսփոխանական ժողովը ընդունեց 93 ի դէմ 217 ձայնով, կղերական կուսակցութեան գլուխ Պ. Վինտհորստի մէկ հակակառավարական առաջարկն, որ կը սպառնադրէ ջնջել եկեղեցականաց արտաքսման վերաբերեալ օրէնքը։

— Բոլերան դրեթէ բոլորովին անհետացաւ Սպանիայէն, Իտալիայէն, Ալճերիայէն, ու Ֆրանսայէն։ Ալեքսանդրիոյ քարանթինան վերցաւ։

ՆԵՐՔԻՆ

—

Խմբէրն էքսբրէս, Ձերիտէի Հավատիս և Օսմանլը լրագիրք բարձրագոյն հրամանաւ դադարման դատապարտեցան։

— Բարիզի Օսմանեան դեսպան Խոստ փաշա ի դիմաց կայս. կառավարութեան բողոքագիր մը տուած է Ֆրանսայի արտաքին գործոց նախարարին՝ Թաճուբայի դրաւման դէմ։

—Մաքսային սակագնոց քննիչ յանձնաժողովը ընդունեց Ռուսիոյ կողմէ առաջարկեալ մաքսային սակագներն։

— Լուսինեան իշխանուհին երեքշաբթի օրը մայրաքաղաքս եկաւ։

— Օսմ. հանրային պարտուց վճռման գործողութիւնք չաբթուս սկսան Կայսերական Պանքայի Պոլսոյ դրասենեկաց մէջ։

— Պուլղարիոյ կառավարութիւնն որոշած է Ռուսճուքն աղատ նաւահանգիստ հռչակել։

— Փոքր Ասիոյ մէջ իւր ասպատակութիւններով հանրածանօթ Գաբտան Անտրէա անցեալ շաբթու ձերբակալեցաւ Աֆիոնքարի մէջ։ Կը յիշուի թէ անցեալներն Իզմիրի մէջ Երկրի Լիալաքաս անուն անձ մը ձերբակալուելով, հրապարակաւ դատուեցաւ իբր Գաբտան Անտրէա, և տասնեւհինգ ամեայ բանտարկութեան դատապարտեցաւ։

Այժմ բուն աւազակապետն երեւան ելած լինելով, դատական տարեգրութեանց մէջ իբր նորանշան դէպք մը կը նկատուի այս։ Էքսբրէս այս առթիւ Իմիրի կուսակալին դէմ ծանր յօդուած մը դրած լինելուն պատճառաւ, դատական իշխանութիւնը դատ բացած է նորա դէմ։

— Բերայի նախորդ կառավարիչ Պահրի փաշա, որ անպարտ արձակուած է, Ափրիկեան Տրիպոլսոյ Ֆեղղան դաւառակին կառավարիչ կարդուած է։

— Ֆընտըղլեան և Մըրմըրեան տեարց տարապարծութեան վճռաւատնէն իւր վճարքը դադրեցուց 12,000 ոսկի բացով։

ԱԶԳԱՅԻՆ

Պատրիարքական ընտրութեան խնդիրը կանոնաւոր ճամբու մը մէջ կը դանուի։

Նախարարաց Խորհուրդն, իւր վերջին նստին մէջ, հաւանելով այն կարդադրութեան՝ որով Ազգային Վարչութիւնն յարմար դատած էր Պատրիարքական ընտրութեան ձեռնարկել առանց յատուկ Տեղապահի ընտրութեան, Պատրիարքարանի խընդիրն՝ ի մասին ընտրութեան նոր Պատրիարքի՝ տեղեկագրով մը ներկայած է կայսերական հաւանութեան։

Այժմ կ'սպասուի կայսերական հրամանն, որ նոր Պատրիարքի ընտրութեան ձեռնարկելու հրաման պիտի տայ, և որով Պատրիարքական փոխանորդ Հօր առաժամեայ պաշտօնն ալ պիտի հաստատուի։

Այս տեղեկութիւնն, զոր վաւերական աղբիւրէ քաղած ենք, բարեբաղդաբար կը ջրէ այն կասկածներն, որք Բ. Դրան պատասխանին երեք չաբաթներէ հետէ ուշանալէն ծագումն առած էին։

— Քաղաքական ժողովն իւր հինգշաբթի առաւ նստին մէջ գլխաւորաբար զբաղեցաւ «Ներսէս Վարժապետեան» կեդրոնական վարժարանի խնդրովն։ Գործադիր յանձնաժողովոյ երեք մեծ. անդամք ժողովոյ ներկայանալով, իրենց կազմութիւնն և հիմնական պայմաններն յայտնեցին. բացուելիք վարժարանի կանոնադիրը Քաղաքական ժողովոյ պիտի ներկայեն, որոյ վաւերացումէն յետոյ, հանդանակութեան պիտի ձեռնարկուի։

— Հաճնոյ բռնի ամուսնութեան խընդրոյն դրեթէ յար և նման դէպք մ'ալ մայրաքաղաքիս մէջ պատահած է այս օրերս։

Տաններեք տարեկան Ամասիայի հայ աղջիկ մը հայ քահանայի մը ձեռամբ բռնի պսակուած է 41 տարեկան զաւառացի Հայու մը հետ, ի Զուգուր Ջէշմէ, հայ պանդուխտներու բնակավայրին մէջ։

Աղջկան բողոքներուն և յայտնի ընդդիմութեան չնայելով, ի բացակայութեան իւր ծնողաց և եղբօր, քանի մը դաւառացիներ բռնի կատարել տուած են պսակի արարողութիւնը։

Խնդիրը Կրօնական ժողովոյ ներկայացած, և բռնութեան դէպքը նոյն իսկ աղջկան վկայութեամբ ապացուցուած է

Կրօն. ժողովը զատած է աղջիկն իւր ինքնակոչ ամուսնէն, որ յաղթանդամ և խոշոր մարդ մը՝ կը հաւարձակէր կնութեան առնուլ այսպիսի տկար և դեռատի աղջիկ մը, և կէտիկ վաչա քահանայի մը առնը ղրկած է առ այժմ։ Տարակոյս չկայ թէ պըսակը պիտի լուծուի իբրեւ անվաւեր։

—Կրօնական ժողովն այս երկուշաբթի դուռնարուեցաւ ընդ Ատենապետութեամբ Գեր. Խորէն Նարպէյ Սրբազանի, և զբաղեցաւ քանի չափ մասնաւոր խնդրոց լուծմամբ։ Ժողովն ընթերցաւ ապա էջմիածնայ Ս. Սինհոդի, Ազգանուագ Կաթողիկոսի, կաթողիկոսական տեղապահ Ամեն. Մակար Սրբազանի նամակներն, որոց ամենքն ալ խորին ցաւ կը յայտնէին ընդ տարաժամ մահ հոգելոյս Ներսէս Ս. Պատրիարքի։ Գոհութեամբ ընթերցաւ կարնոյ Գեր. Առաջնորդի հեռագիրն որով կը ծանուցանէր թէ, կարնոյ Հայ բանտարկեալներէն չորսն ևս վեհ. Սուլթանին ներման արժանացած և բանտէ արձակուած են։

—Ազգային կրթական ընկերութեանց մէջ իւր եռանդուն գործունէութեամբ ծանօթ Հրանտ էֆէնտի Ասատուր, որ երեք տարիէ հետէ Փարիզի մէջ իրաւաբանական ուսման կը հետեւէր և «Լիսանուիէ ան Տրուա»ի վկայական ստացած էր, մայրաքաղաքս հասաւ։

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳՐԱՎՈՒԹԻՒՆ

Փարիզ, 2 դեկտ.

Ծերակուտի ընտրութեան վերաբերեալ նոր օրինաց վրայ Երեսփոխանական ժողովին մէկ քուէարկութեան առթիւ, որ անհնար կը դործէր որ եւ է համաձայնութիւն Ծերակուտի հետ, նախարարական տագնապի դրոյթք տարածուեցան, բայց իսկոյն հերքուեցան։

Փարիզ, 4 դեկտ.

Հանրային կրթութեան նախկին նախարար Պ. Վիքթոր Տիւրի, Գիտութեան Ակադեմիայի անդամ Պ. Պէրթրան և թատրերգակ հեղինակ Պ. Լուտովիք Հալեվի անդամ ընտրուեցան Ֆրանսական Ակադեմիային։

ԱԶԴ

Վաեմ. Տօքթ. Սահեան փոխա Ա-
լանեան իւր բնակարանը փոխադրած
է ի Գատըգիւղ, Մօտա ձատէսի,
թիւ 101, և կը շարունակէ դարմա-
նել իրեն դիմողները՝ թէ՛ անդ ամեն օր,
և թէ՛ Պահճէ Գարու Մէրհամէթճեան
դեղարանը՝ երեքշաբթի, հինգշաբթի, և
շաբաթ օրերն ի միջօրէի. —Աղքատ-
ները միշտ և ամենուրեք ձրի:

5—30

ՈՒՆԻՆ ԿԱՄ ՉԷՅԹՈՒՆ

ԼՈՒՆԱՅԻՆ ԱԻԱՆ Ի ԿԻԼԻԿԻԱ

ՆԿԱՐԱԳԻՐ

ՏԵՂԱԿԱՆ, ԿԵՆՍԱԿԱՆ, ԲԱՆԱՒԻՐԱԿԱՆ
ԵՒ ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

Գրեց

Ց. Ց. Ալվահվէրտեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մասն Ա. — Դիրք, Շէնք, Թիւ բնակ-
աց, Եկեղեցիք, Վարժարանք, Վանորայք:
Մասն Բ. — Փնուռդ և Մկրտութիւն,
Անուանք, Հագուստք, Տնական կարասիք և
կեանք, Ուտեստք, Լուացարարութիւն լա-
թեղինաց և Մաքրութիւն մարմնոյ, Բարոյք,
Կրօնական և բարոյական հանդամանք, Ազ-
գային կեանք, Ընկերութիւնք, Երկրագոր-
ծութիւն, Արմտիք, Բոյսք, Կենդանիք,
Գաղղիական ախտ, Դեղք. Հիւանդութիւն
և Մահ, Հանդէս թաղման:

Մասն Գ. — Աւելորդապաշտութիւնք,
Օրհնութիւնք կամ Բարեմաղթութիւնք, Ա-
նէծք, Երդմունք, Վրէժխնդրութիւնք, Ա-
ռակք, Յանդուգն պրոյքք, Պատմութիւնք,
Աստեղանուանք, Հանելուկք, Տէրունական
աղօթք Զէյթունցւոց:

Բառք — Գործածականք, գիտականք,
երկրագործականք, և բուսաբանականք:

Արամեան մաքուր տպագրութեամբ
ի լոյս եկած լինելով՝ կը վաճառի ամեն
գրավաճառաց քով ի գին 10 դահեկանի:

Կեդրոնատեղին է Կ. Պոլիս մեծ շու-
կայ Զուխաճի խանի դէմ վարագճը խան:

Վաճառեալ 30 հատի դիմեն հեղի-
նակին կողմանէ նուիրեալ է Զէյթունի
հրկիզելոց:

Զէյթունի վրայ հրատարակութեան
մը պէտքն ցարդ յոյժ զգալի էր. հե-
տեւաբար, առաջին անգամն ըլլալով
այսպիսի ընդարձակ գրքի մը հրատա-
րակութիւնն՝ կը յանձնարարեմք զայն
աղնիւ հասարակութեան, յորմէ թէ՛
հետաքրքիր ընթերցողն, թէ՛ բանա-
սէրն և թէ՛ գիտունն միանգամայն կա-
րեն օգտիլ:

Բառերէն երկրորդաբար քաշնեփոփոխեալ 89րդ էջակահանութեան ոչխարը

Թ.	Ֆր.	Թ.	Ֆր.	Թ.	Ֆր.	Թ.	Ֆր.
1,071,173	600,000	376,310	3,000	421,730	1,000	1,431,945	1,000
394,484	60,000	456,476	»	509,174	»	1,437,913	»
750,758	20,000	502,832	»	547,122	»	1,543,236	»
1,331,929	»	527,665	»	547,124	»	1,555,289	»
1,431,944	6,000	1,225,867	»	601,465	»	1,637,989	»
1,587,518	»	1,555,286	»	628,373	»	1,637,990	»
1,635,065	»	1,637,986	»	711,258	»	1,696,550	»
1,743,331	»	1,637,987	»	729,465	»	1,858,902	»
1,743,333	»	1,696,546	»	841,112	»	1,862,842	»
1,937,460	»	42,322	1,000	1,085,985	»	1,937,456	»
114,470	3,000	63,971	»	1,265,631	»	1,937,459	»
244,946	»	104,818	»	1,265,635	»		»
244,948	»	203,951	»	1,331,928	»		»

ՐՈՒՄԲԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԵՄՅ ԱՐԺԷԹՂԹՈՑ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

400 ֆրանք շահող թիւեր

22,806	231,686	417,630	601,462	812,052	1,037,038	1,437,912	1,635,062	1,824,981
7	7	419,286	3	3	9	4	3	2
8	8	7	4	4	40	5	4	3
9	9	8	628,066	5	1,071,171	6	1,637,988	4
10	90	9	7	841,111	2	7	1,647,941	5
42,321	242,106	90	8	3	4	8	2	1,829,306
3	7	421,726	9	4	5	9	3	7
4	8	7	70	5	1,085,981	50	4	8
5	9	8	628,371	857,576	2	1,468,646	5	9
63,972	10	9	2	7	3	7	1,649,091	10
3	244,947	456,477	4	8	4	8	2	1,939,476
4	9	8	5	9	1,108,171	9	3	7
5	50	9	691,331	80	2	50	4	8
87,521	266,676	80	2	868,916	3	1,487,061	5	9
2	7	479,521	3	7	4	2	1,653,291	80
3	8	2	4	8	5	3	2	1,858,901
4	9	3	5	9	1,124,776	4	3	3
5	80	4	697,691	20	7	5	4	4
104,816	277,111	5	2	888,186	8	1,488,021	5	5
7	2	502,831	3	7	9	2	1,695,516	1,862,841
9	3	3	4	8	80	3	7	3
20	4	4	5	9	1,153,371	4	8	4
106,276	5	5	711,256	90	2	5	9	5
7	345,816	509,171	7	918,876	3	1,533,631	20	1,863,596
8	7	2	9	7	4	2	1,696,547	7
9	8	3	60	8	5	3	8	8
80	9	5	724,546	9	1,196,896	4	9	9
114,466	20	527,661	7	80	7	5	1,712,681	600
7	376,306	2	8	970,546	8	7	2	1,884,816
8	7	3	9	7	9	8	3	7
9	8	4	50	8	900	9	4	8
119,081	9	540,621	729,461	9	1,225,866	40	5	9
2	379,141	2	2	50	8	1,555,287	1,743,332	20
3	2	3	3	996,431	9	8	4	1,908,596
4	3	4	4	2	70	90	5	7
5	4	5	739,531	3	1,265,632	1,566,551	1,752,001	8
178,841	5	547,121	2	4	3	2	2	9
2	394,481	3	3	5	4	3	3	600
3	2	5	4	1,018,811	6	4	4	1,909,946
4	3	579,491	5	2	7	5	5	7
5	5	2	750,756	3	30	1,587,516	1,763,401	8
181,446	402,736	3	7	4	1,340,676	7	2	9
7	7	4	9	5	7	9	3	50
8	8	5	60	1,033,181	8	20	4	1,937,457
9	9	582,756	809,331	2	9	896	5	8
50	40	7	2	3	80	7	1,802,221	1,940,061
203,952	417,626	8	3	4	1,431,941	8	2	2
3	7	9	4	5	2	9	3	3
4	8	60	5	1,037,036	3	900	4	4
5	9	601,461	812,051	7	1,437,911	1,635,061	5	5

Պատասխանատու կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ